30 ՕԳՈՍՏՈՍ 2013 ՈՒՐԲԱԹ 143(5226)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## ՄԱԿ-ի տեսուչները Սիրիայից կհեռանան շաբաթ օրը

*Դամասկոսի ռազմակայանները տարհանվում են*

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը օգոստոսի 29-ին Վիեննայում հայտարարեց, որ Սիրիայում քիմիական զենքի օգտագործման հետքեր փնտրող միջազգային տեսուչների խումբը այդ երկրից կհեռանա շաբաթ առավոտյան:



Ֆրանսպրեսը հաղորդում է, որ օգոստոսի 29-ի առավոտյան ՄԱԿ-ի փորձագետները Դամասկոսում իրենց հյուրանոցից դուրս են եկել, որպեսզի 3-րդ օրն անընդմեջ մեկնեն օգոստոսի 21-ի ենթադրյալ քիմիական գրոհի վայր՝ Գուտայի շրջան, որը մայրաքաղաքի ծայրամասում է: Բան Կի Մունի խոսքերով, տեսուչները իրենց հետազոտությունը պետք է ավարտեն այսօր՝ օգոստոսի 30-ին:

Նախօրեին ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նրան խնդրել էր հնարավորություն տալ, որպեսզի քիմիական զենքի միջազգային փորձագետներն ավարտեն աշխատանքը Սիրիայում:

Իսպանական EFE գործակալությունը հաղորդում է, որ փորձագետների աշխատանքի նախնական արդյունքները կարող են հրապարակվել արդեն շաբաթ օրը:

Արդյունքների հրապարակմանը չսպասելով՝ Արեւմուտքն արդեն ռազմանավեր է ուղարկել Միջերկրական ծովի արեւելյան շրջաններ: Ակտիվանում է նաեւ Ռուսաստանը: Այդ երկրի զինվորական աղբյուրներ վկայակոչելով՝ Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ Մոսկվան «մոտ օրերս» տարածաշրջան կուղարկի հակասուզանավային ռազմանավ եւ հրթիռակիր նավ, որոնք «կմիանան այնտեղ գտնվող ռուսական նավախմբին»: ՌԴ պաշտպանության նախարարությունը այս կապակցությամբ որեւէ հայտարարություն չի արել:

«Ֆիգարո» թերթի կայքէջը հավելում է, որ ԱՄՆ-ը հայտարարել է տարածաշրջանում իր նավախումբը 4-րդ՝ հրթիռակիր ռազմանավով համալրելու մտադրության մասին:

Տես էջ 8

## Իլհամ Ալիեւը՝ հակասիրիական կոալիցիայում

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Ադրբեջանը, որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, գործուն մասնակցություն կունենա Սիրիայի հարցով ԱԽ բանաձեւի քննարկումներին»,- հայտարարել է այդ երկրի ԱԳՆ մամուլի խոսնակը: «Զերկալո»-ի մեկնաբանն ասվածից եզրահանգել է, որ պաշտոնական Բաքուն «բաց տեքստով հայտարարել է, որ կքվեարկի Մեծ Բրիտանիայի ներկայացրած բանաձեւի օգտին, որը թույլ է տալիս Ասադի ռեժիմի դեմ ուժ կիրառել՝ հանուն խաղաղ բնակչության անվտանգության»:

Ընդսմին, ադրբեջանցի մեկնաբանը սեփական ենթադրությունն է արել նաեւ սպասվող «ռուս-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման» մասին՝ որպես «գրեթե հարյուրտոկոսանոց հավանականության»: Եթե Ադրբեջանն իրոք ՄԱԿ-ում պաշտպանի Սիրիայի հարցով ԱԽ բանաձեւի նախագիծը, որին դեմ են Ռուսաստանը եւ Չինաստանը, ապա Մոսկվան, անկասկած, դրանից համապատասխան եզրակացություններ կանի:

Խնդիրն այն է, թե ո՞վ է ստեղծված իրավիճակում ավելի շահագրգռված ռուս-ադրբեջանական հարաբերություններում հնարավոր լարվածությամբ: Դատելով ադրբեջանական մամուլի որոշ ընդգծված «սենսացիոն» բնույթի հրապարակումներից, Իլհամ Ալիեւի վարչակազմը հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի իրավիճակի «սրման պատասխանատվությունը» վերագրվի ռուսաստանյան կողմին:

Այս իմաստով հատկանշական է նախագահական ընտրություններում ընդդիմության թեկնածուի շուրջը Ռուսաստանում ձեւավորվող «օժանդակության» թեման:

Տես էջ 8

## Հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստում

*Ժողովը կկայանա զույգ կաթողիկոսների մասնակցությամբ*

Օգոստոսի 28-29-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի կողմից նշանակված Հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական հանձնախմբի ժողովը:

Ժողովին մասնակցեցին նախապատրաստական հանձնախմբի անդամներ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը, Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեզյանը եւ սրբադասման ու ծիսական բարեկարգության հանձնախմբերի անդամներ Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանը, Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Բաբգեն եպիսկոպոս Չարյանը:

Օգոստոսի 28-ին՝ չորեքշաբթի, Գարեգին Բ Վեհափառն ընդունեց ժողովական հայրերին եւ նրանց փոխանցեց եպիսկոպոսաց ժողովի գումարման մասին իր պատկերացումներն ու արդյունալից աշխատանքի օրհնությունները:

Երկու օրերի ընթացքում ժողովական սրբազան հայրերը քննարկեցին Հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի գումարման թվականի, օրակարգի եւ ժամանակացույցի հետ կապված հարցեր:

Հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա 2013 թ.-ի սեպտեմբեր 24-27-ը Ս. Էջմիածնում, Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնությամբ եւ ներկայությամբ:

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Ի հիշատակ ֆրանսահայ նկարիչ Ժանսեմի՝ Շահեն Խաչատրյանի հրապարակումը. «Բնության խորհրդի ասպետը»:

Տպավորություններ Ժանսեմի հետ Արամ Իսաբեկյանի հանդիպումներից:

Կարպիս Սուրենյանի վերջին՝ «Հայ լինելու առեղծվածը» գրքի առիթով. Նորայր Ադալյան. «Կարպիս Սուրենյանի շարունակվող ներկայությունը»:

Մեր զրույցը գիրքը հրատարակության պատրաստող գրողի որդու՝ Հովհաննես Սարկավագյանի հետ:

Ոչ վաղ անցյալի երեւանյան մշակութային կայնքի էջերից. «Արմենիա» ռեստորանի մտավորական այցելուները. Ավիկ Իսահակյանի «Արմենիայի զավակները» հոդվածաշարը, մաս I, «Հրաչյա Ներսիսյանը եւ մյուսները»:

Թամար Հովհաննիսյանի հրապարակումը բեյրութահայ մշակութային գործիչ, խմբավար Գեւորգ Գանտահարյանի հիշատակին:

Ճապոնական մշակույթ - «Օրիգամի», ներկայացնում է Անի Մագումյանը:

Ս. Բ.

## Կսահմանվի ուսման վճարի վերին շեմ

**«Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություններով առաջարկվում է փոխել ուսանողների ֆինանսական աջակցության գործող համակարգի գաղափարախոսությունը: Մասնավորապես, առաջադիմության վրա հիմնված բարձրագույն կրթության առաջարկի ֆինանսավորման ձեւին զուգահեռ՝ աստիճանաբար ներդնել բարձրագույն կրթության պահանջարկի ֆինանսավորման ձեւը՝ առավել հասցեական եւ արդյունավետ դարձնելով ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերը: Կառավարության հավանության արժանացած այս փոփոխութունների մասին խոսելով՝ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց. «Փաստորեն այս օրենսդրական նախաձեռնությամբ մենք իրականացնում ենք մեր նախընտրական խոստումը, ինչպես նաեւ կառավարության ծրագրի կարեւորագույն դրույթներից մեկը, այն է՝ կառավարությունը գործիք է ունենալու, որպեսզի սահմանի ուսման վճարի վերին շեմ: Քանի որ սա սոցիալական լուրջ խնդիրներից է, պետությունները սովորաբար կիրառում են այս գործիքը, որպեսզի նաեւ հանրությունը տեղյակ լինի, որ կառավարությունը կարող է զսպել ուսման վարձի աճը եւ կարող է միջամտել, եթե տեսնի, որ ուսման վարձը բարձրացվում է անհիմն ձեւով եւ չի համապատասխանում շուկայական այն գնին, որ առկա է Հայաստանի Հանրապետությունում: Օրենքի ընդունումից հետո կառավարությունը հնարավորություն կունենա համապատասխան որոշումներով այս դաշտը կանոնակարգելու եւ հստակ ազդակներ հաղորդելու նաեւ բուհերին, թե նրանց գնագոյացման ռազմավարությունն ինչպիսին պետք է լինի: Մենք կկարողանանք պատասխանել նաեւ հանրությանը մտահոգող այն հարցին, թե ինչպիսին է կառավարության դիրքորոշումը ուսման վարձի վերաբերյալ»:**

**Ա. Մ.**

## Քաղաքապետի խոսքի արժեքը. «Փակ շուկան» սեպտեմբերի 15-ից կգործի որպես «Երեւան-սիթի»



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երկու տարի շարունակ ԶԼՄ-ներն ու ճարտարապետներն անընդհատ բարձրաձայնում էին «Փակ շուկայի» խնդրի մասին: Երկու տարի շարունակ ասուլիսներ, բողոքի ակցիաներ, հարյուրավոր հոդվածներ: Երկու տարի շարունակ կառույցի ճակատագրով պատասխանատուները՝ մշակույթի նախարարությունն ու քաղաքապետարանը, կա՛մ խուսափում էին «Փակ շուկայի» վերաբերյալ խոսելուց, կա՛մ էլ հավաստիացնում, որ ամեն ինչ լավ է լինելու:

Գրեթե միշտ լուռ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը երկու անգամ հավաստիացրել է, որ «Փակ շուկան» վերադարձվելու է նախկին տեսքին: Մի անգամ Տարոն Մարգարյանը նման խոստում տվել է ավագանու անդամների հետ հանդիպմանը, մեկ անգամ էլ՝ երդմնակալության արարողությունից հետո, երբ լրագրողներն ուղղակի «ստիպեցին», որ Մարգարյանը խոսի:

«Հավաստիացնում եմ, որ «Փակ շուկան» կվերադառնա իր նախկին տեսքին:

Տես էջ 3

ԱԶԳ

**Ընթացիկ**

# «100 դրամից բարձր ուղեվարձով առաջարկը մրցութային հանձնաժողովը չէր ընդունի»

## *Երեւանի քաղաքապետի խորհրդականը՝ ավտոբուսային մրցույթների չկայանալու պատճառների եւ տրանսպորտի սակագնի մասին*

***Երեւանի քաղաքապետարանը օրերս երկրորդ անգամ 23 ավտոբուսային եւ մեկ միկրոավտոբուսային երթուղիներում սպասարկող ընկերությունների մրցույթ հայտարարեց: Ի՞նչ նպատակով, ի՞նչ եղավ նախորդ մրցույթը եւ ի՞նչ է սպասվում Երեւանի հասարակական տրանսպորտին առաջիկայում: Այս հարցերն ուղղեցինք Երեւանի քաղաքապետի խորհրդական Ալբերտ Գեւորգյանին:***

**- Պրն Գեւորգյան, Երեւանի քաղաքապետարանը օգոստոսի 27-ին նորից մրցույթ հայտարարեց 23 ավտոբուսային երթուղիների սպասարկող կազմակերպություններ ընտրելու համար: Ի՞նչ եղավ նախորդ անգամ հայտարարված այս նույն մրցույթի ճակատագիրը:**

- Նախ հիշեցնեմ, որ մայրաքաղաքում նոր երթուղային ցանցի հաստատումից հետո, անցյալ տարվա մայիսի 31-ից սկսվեցին միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների մրցույթները: Համաձայն նոր ցանցի, գործող 109 միկրոավտոբուսային երթուղիները պետք է դառնան 76, իսկ ավտոբուսայինները՝ 29-ից 68: 23 երթուղիներից 15 երթուղի միկրոավտոբուսայինից ավտոբուսային դարձնելը նախատեսված է երթուղային ցանցով: Դրանց մեջ կան նաեւ նոր երթուղիներ: Այս երթուղիների մի մասի համար հայտարարված մրցույթը տեղի ունեցավ օգոստոսի 1-ին, մյուս մասինը՝ օգոստոսի 16-ին: Այնինքն, դրանք տեղի չունեցան:

**- Ինչո՞ւ:**

- Տեղի չունեցան, որովհետեւ ոչ մի կազմակերպությունից չստացանք մրցույթին մասնակցելու հայտ:

**- 100 դրամ ուղեվարձը քաղաքապետարանի կողմից սահմանված մրցույթի պայմա՞ն էր:**

- Ոչ, սակագնի առաջարկը ներկայացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող ընկերությունները, բայց քանի որ քաղաքապետը կասեցրել է տրանսպորտի ուղեվարձը 150 դրամ դարձնելու որոշումը եւ ներկայումս փոխադրավարձը 100 դրամ է, ընկերությունների կողմից դրանից բարձր սակագնով առաջարկը մրցութային հանձնաժողովը անընդունելի կհամարեր:

**- Ինչո՞ւ ընկերություններից ոչ մեկը չցանկացավ 100 դրամ ուղեվարձով առաջարկ ներկայացնել:**

- Երթուղիներ սպասարկող ընկերությունները դեռ 2008-ից են բարձրացրել ուղեվարձի բարձրացման հարցը: Այս տարվա հուլիսի 9-ին նրանք գրավոր դիմեցին Երեւանի քաղաքապետին՝ խնդրելով վերանայել ուղեվարձը եւ դարձնել 200 դրամ: Նրանք նշում էին այն փոփոխությունները, որոնք անհնար են դարձնում 100 դրամով երթուղիներ սպասարկելը՝ ընդհանուր գնաճը, որն ազդել է վառելիքի, ավտոբուսների, պահեստամասերի, քսայուղերի գների վրա, վարկերով նոր ավտոբուսներ ձեռք բերելու անհնարինությունը, քանի որ բանկերը հրաժարվում են վարկեր տալ, ռիսկային համարելով 100 դրամ սակագնի պայմաններում բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումը: Հաջորդը վարորդների ցածր աշխատավարձերն են, որոնց պատճառով կան ավտոբուսներ, որ չեն աշխատում: Մենք այս պահին 220-230 վարորդի կարիք ունենք: Այս սակագինը նաեւ հնարավորություն չի տալիս վարորդների ծանր աշխատանքին համարժեք աշխատավարձ տալ:

**- Ե՞րբ է տեղի ունենալու հայտարարված մրցույթը, եւ ի՞նչ պետք է լինի, եթե նորից չկայանա:**

- 23 ավտոբուսային եւ 1 միկրոավտոբուսային երթուղիների մրցույթը տեղի է ունենալու հոկտեմբերի 17-ին: Այս պահին չեմ կարող պատասխանել, հայտեր կլինե՞ն, թե՞ ոչ: Չլինելու դեպքում մրցույթը կհամարվի չկայացած եւ կհայտարարվի նոր մրցույթ:

**- Պրն Գեւորգյան, երբ քաղաքապետը կասեցրեց ուղեվարձի թանկացման իր որոշումը, իր ելույթում ասաց, որ հանձնաժողով պետք է ստեղծվի՝ սակագնի, բնակչության խոցելի խավերին առնչվող հարցերը քննարկելու եւ որոշումներ ընդունելու համար: Հանձնաժողովը ստեղծվե՞լ է:**

- Նկատի ունենալով հարցի կարեւորությունը՝ ստեղծվելիք հանձնաժողովում ներգրավվելու են ոլորտի մասնագետներ, շահագրգիռ անձինք եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ, նաեւ Երեւանի ավագանու բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները: Այժմ հանձնաժողովը ձեւավորվման փուլում է: Արդեն իսկ ուսումնասիրվում է սոցիալական խոցելի խավերի համար ճկուն զեղչային տարբերակների, միասնական կտրոնային համակարգի ներդրման տարբեր երկրների փորձը: Մի խոսքով, այս բոլոր հարցերը կքննարկենք հանձնաժողովում, այնուհետեւ հանձնաժողովի եզրակացությունները դրանց վերաբերյալ կներկայացնենք հանրային քննարկման, որից հետո միայն վերջնական որոշում կընդունվի:

**- Պրն Գեւորգյան, այդուհանդերձ, Դուք հնարավոր համարո՞ւմ եք 100 դրամ ուղեվարձի պահպանումը:**

- 100 դրամ ուղեվարձով հնարավոր չէ որակյալ եւ անվտանգ տրանսպորտային սպասարկում ապահովել: Բացի իմ հիշատակած վառելիքի, ավտոբուսների եւ պահեստամասերի գների աճից, վարորդների ցածր աշխատավարձից եւ որպես արդյունք 220 թափուր աշխատատեղերից, այդ սակագնով աշխատելու համար ոչ մի կազմակերպություն նոր ավտոբուսներ չի ներկրի: Մեկ-երկու տարի հետո եղած շարժակազմը կմաշվի եւ շարքից դուրս կգա, ինչի հետեւանքով հասարակական տրանսպորտը կգնա փոշիացման: Ոչ մի բիզնես ներդրում չի կատարի այնտեղ, որտեղից գումարի հետ վերադարձ եւ շահույթ չկա: Սա անհրաժեշտ է գիտակցել: Չի կարելի Երեւանի տրանսպորտը հասցնել նման վիճակի:

Հարցազրույցը՝
ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

# Կենսաթոշակները կսկսեն վճարվել ամսվա 3-րդ աշխատանքային օրվանից

Կենսաթոշակների վճարման մեխանիզմների վերաբերյալ կառավարության երեկ ընդունած որոշման վերաբերյալ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արտեմ Ասատրյանը** լրագրողներին ներկայացրեց այս ոլորտում վերջին ամիսներին կատարված աշխատանքները: Ըստ նախարարի, եթե նախկինում ամբողջ ամիս էին տեւում թոշակառուների ցուցակի ճշտման հետ կապված աշխատանքները, հնարավոր էր լինում ձեռքով փոփոխություններ անել, ապա նոր էլեկտրոնային համակարգում այդ ամենը տեւում է 1-2 օր, ինչը նշանակում է, որ ամեն ամսվա 3-րդ աշխատանքային օրվանից վճարող կազմակերպությունները կսկսեն վճարել թոշակները: Նոր համակարգը հնարավորություն չի տալիս նաեւ ձեռքով միջամտություններ անելու ցուցակներում: Արտեմ Ասատրյանը տեղեկացրեց նաեւ, որ ամսական միջինը 20 հազար դիմումներ են լինում կենսաթոշակների հետ կապված:

Ա. Ս.

*ՍԲ ԷՋՄԻԱԾԻՆ*

# Հայոց եղեռնի 100-ամյա տարելիցի միջոցառումների հանձնախմբի ժողով Մայր աթոռում

**Օգոստոսի 29-ին Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր աթոռի միջոցառումները նախապատրաստող հանձնախմբի ժողովը՝ նախագահությամբ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի:**

**Ժողովի ընթացքում քննարկվեցին եւ հստակեցվեցին Մայր աթոռի ծրագրած միջոցառումները եւ դրանց կազմակերպման ժամանակացույցը, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հետ համատեղ իրականացվելիք աշխատանքները:**

**Ժողովին մասնակցում էր նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար Հայկ Դեմոյանը:**

# Երեւանի պետական համալսարանում

**2013-2014 ուստարում մայր բուհում կսովորի 3414 առաջին կուրսեցի, որոնցից 408-ը՝ անվճար, 3006-ը՝ վճարովի համակարգով:**

**Այս տարի ուսումնական տարին կմեկնարկի սեպտեմբերի 2-ին:**

**Երեւանի պետական համալսարանում առաջին կուրսեցիներին ֆակուլտետների դեկանները, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողական կառույցների ներկայացուցիչները կդիմավորեն ֆակուլտետի դահլիճներում եւ լսարաններում:**

**Ռոմանագերմանական բանասիրության եւ սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողները կհաճախեն 2-րդ հերթով, իսկ մյուս բոլոր ֆակուլտետներում դասերը կմեկնարկեն 1-ին հերթով: 1-ին հերթի դասերը սկսվում են ժամը 09:30-ին, իսկ 2-րդ հերթինը՝ 14:30-ին:**

**Ժամանակացույցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ԵՊՀ պաշտոնական կայքի՝ www.ysu.am-ի նորությունների բաժնում:**

**«Ազգ»-ը երեկ գրել էր ԵՊՀ-ում դասախոսների նոր հավելավճարների մասին՝ ըստ կարգերի, վերապահություն հայտնելով այդ կարգերի ընկալման վերաբերյալ: Երեկ ԵՊՀ մամուլի գրասենյակից հայտնեցին, որ անտեղի են մեր այդ մտահոգությունները, քանզի ցարդ որեւէ նախադեպ չկա «կարգային» դժգոհության: Մաղթենք, որ մեր մտահոգությունն անհիմն լինի:**



# Իրացման նոր գոտիներ Երեւանում

Երեւանի քաղաքապետարանի առաջարկությամբ կառավարությունը երեկ Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Պուշկինի, Տերյան, Եզնիկ Կողբացու եւ Հին Երեւանցու փողոցներով պարփակված տարածքի նկատմամբ ճանաչեց բացառիկ՝ գերակա հանրային շահ: Ավելի վաղ նշված եւ Նալբանդյան, Պուշկինի, Աբովյան փողոցներով եւ Սախարովի հրապարակով պարփակված տարածքներում արդեն իսկ հաստատվել է քաղաքաշինական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: Կառավարության որոշումներով, «Լոկալ Դիվելոփըրզ» ընկերությունը նշված տարածքների ձեռքբերողն է եւ կատարել է օտարման գործընթացներ:

Մեկ այլ որոշմամբ էլ գերակա հանրային շահ ճանաչվեց Երեւան քաղաքի Գլխավոր պողոտայի, Աբովյան, Բուզանդի, Եզնիկ Կողբացու եւ Արամի փողոցներով պարփակված տարածքի նկատմամբ: Դա հնարավորություն կտա ավարտին հասցնելու քաղաքաշինական ծրագիրը, որով մասնավոր ներդրումների հաշվին Երեւանի կենտրոնից կվերանա կիսախարխուլ, հիմնականում վթարային բնակելի ֆոնդը եւ Գլխավոր պողոտայի՝ Բուզանդի, Կողբացու եւ Արամի փողոցներով սահմանափակվող տարածքում հնարավոր կլինի վերականգնել «Հին Երեւան» պատմաճարտարապետական միջավայրը:

Ա. Ս.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

# Սահմանամերձ Մովսես գյուղին աջակցելու ծրագրեր

Սահմանամերձ Մովսես գյուղում միշտ էլ ադրբեջանական կողմից գնդակոծություններ են լինում: Մովսեսցիներն Աստծու ամեն օր անհանգիստ կյանքով են ապրում՝ գյուղն ամբողջությամբ ադրբեջանական դիրքերից տեսանելի է, գյուղի մշակելու ենթակա հողերը գնդակոծության գոտում են, եւ գյուղացու համար իր առօրյա գործն անելն ու վտանգից զերծ մնալը միմյանց միահյուսված մտահոգություն են: Ու չնայած Մոսկվայում բնակվող մովսեսցի գործարար Վազգեն Վանեսյանի կառուցած Սուրբ Աստվածածին եկեղեցու զորությունը արդեն երկու տարի գումարվում է մովսեսցու ամենօրյա դիմակայությանը վտանգի, այնուամենայնիվ, գյուղին առավել ակնառու աջակցություն է հարկավոր: Ընդհանրապես՝ Հայաստանի սահմանամերձ գյուղերի հիմնախնդիրները, պետությանը զուգահեռ, բոլոր հայերիս պետք է մտահոգեն:

Ի դեպ, Մովսեսի եկեղեցին Տավուշի շրջանի Բերդի տարածքի միակ եկեղեցին է, այս իմաստով Մովսես գյուղի նշանակությունը հոգեւոր առումով մեծանում է, եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ Արամ քահանա Միրզոյանի վկայությամբ՝ Տավուշի բնակիչների համար սրբավայրի նշանակություն է ձեռք բերում: Սակայն գյուղը քանի որ տրանսպորտային խնդիրներ ունի, եւ գյուղի բնակչության կապը Տավուշի տարածաշրջանի կենտրոնի՝ Բերդի հետ խաթարված է, Տավուշի այլ բնակավայրերից էլ ուխտավորները դժվար են հասնում Մովսեսի եկեղեցի:

Գյուղի խնդիրների մասին «**Ազգը**» զրուցեց ծագումով երեւանաբնակ մովսեսցի, կրթության նախկին փոխնախարար **Ռոբերտ Փոլադյանի** հետ, ում վաղուց հանգիստ չեն տալիս գյուղի խնդիրները, եւ մի անգամ Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ ծրագիր իրականացնելով Մովսեսում (ծառատունկ), նոր ծրագրեր է մտմտում, մանավանդ՝ նույն կազմակերպությունը խոստանում է աջակցել նաեւ այլ՝ սոցիալ-մշակութային ծրագրերի իրագործմանը, ինչպես որ Հայաստանի սահմանամերձ շատ գյուղերի է աջակցում:

Մովսեսում, ինչպես ուրիշ սահմանամերձ գյուղերում, շատ են արտագնա աշխատանքի մեկնածները, գյուղի շատ դռների վրա կողպեքներ կան: Վերջին մարդահամարի ժամանակ Մովսեսն ուներ 2,5 հազար բնակիչ, որի մի մասը այժմ բացակա է գյուղից: Մովսեսի շատ հողատարածքներ մնում են չմշակված, գյուղապետ **Արարատ Ավալյանի** վկայությամբ՝ ադրբեջանական կողմից մշտական կրակոցների պատճառով, երիտասարդությունն էլ, հողագործությամբ չկարողանալով վաստակել՝ մեկնում է արտագնա աշխատանքի: Այս գյուղում իշխանություններից պահանջներ ունեն՝ օգնել տրանսպորտով գյուղը Բերդին կապելու խնդրում, գյուղտեխնիկայով աջակցության ձեւ գտնել, ոռոգման եւ խմելու ջրի համակարգը կարգի բերելուն աջակցել եւ այլն:

2008 թվականից ծնունդով մովսեսցիների «Մովսես գյուղ» շարժում կա՝ գյուղի խնդիրների լուծման նպատակադրումով: Մեկ տարի առաջ այդ մտմտուքն ավելի առարկայական դարձավ, հստակվեց գյուղում ծրագրեր իրականացնողների կազմը եւ բավականին արդյունավետ միջոցառումներ սկսեցին իրականացվել:



Ռոբերտ Փոլադյանն ասում է, որ այսօր սահմանամերձ գյուղերի համար անվտանգության ապահովման, արտագաղթի կասեցման ծրագրեր պետք է մշակել ու քայլ առ քայլ իրականացնել: Տավուշի մարզը 62 բնակավայր ունի, որից 57 գյուղ, բավական մասը՝ սահմանամերձ, որոնցից մեկն էլ Մովսես գյուղն է: Իրենց սկսած առաջին միջոցառումը էկոլոգիական էր, Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ. «150 տնկի բերեցինք, գյուղում ծառատունկ կազմակերպեցինք: Վնասված ենթակայանն ենք կարգի բերել, դպրոցին ենք օգնել:

Հիմա մտադիր ենք սոցիալ-տնտեսական ծրագրեր իրականացնել սահմանամերձ գյուղերում, այդ թվում՝ Մովսեսում, եւ ես գիտեմ, որ Ռուսաստանի հայերի միությունում կա ընդհանրական մոտեցում, որ վերակենդանացնենք սահմանամերձ գյուղերն ու արտագաղթը մեղմենք: Հեռանկար կա, որ ՌՀՄ-ն Ռուսաստանում աշխատող, Հայաստանի սահմանամերձ գյուղերից գնացած գործարարների հետ հանդիպման արդյունքում ուժերը մեկտեղի նրանց հետ եւ սկսի նպատակային ծրագրերի իրականացումը: Ասենք՝ մթերման կայաններ ստեղծվեն, կամ տնտեսության այս կամ այն ճյուղը զարգացնեն, միանանք-անենք: Հիմա Մովսեսի հետ կապված ծրագրեր կան, պետք է թղթին հանձնել եւ ՌՀՄ-ի հետ քննարկել»:

Ռ. Փոլադյանը լավ էր պատկերացնում սահմանամերձ Մովսեսի խնդիրները: Ասենք՝ եթե գյուղապետարանը մեքենատրակտորային կայան ունենա, գյուղացիները պայմանագիր կկնքեն եւ կկարողանան տեխնիկան օգտագործել՝ իրենց տնտեսական խնդիրները լուծելիս: Այդպիսի կայան որեւէ գործարարի աջակցությամբ պետք է ստեղծվի:

Տարածքային կազմակերպությունները նման ծրագրեր ունեն, թե ոչ՝ այս պահին կարեւորը որոշումների կայացումն է: Մարզպետարանները չունեն ծրագրային բյուջե, համայնքները էլ աղքատ են, որ նման խնդիրներ լուծեն: Գործարարները պետք է հանձն առնեն, այս ու այն ճյուղը զարգացնել գյուղում: Օրինակ՝ ծխախոտագործության լավագույն տնտեսությունն էր ժամանակին Մովսեսում, հնարավոր կլինի այն վերակենդանացնել. «Այս տարի հունվարին մենք ստեղծեցինք «Մովսես գյուղի վերածնունդ» հիմնադրամը, որով ամենօրյա կապ ունենք գյուղի հետ եւ մտմտում ենք ծրագրեր: Ամենաառաջնահերթը՝ սոցիալ տնտեսական ոլորտն է: Մտադիր ենք այդ առումով գիտաժողով անցկացնել գյուղում: Հատուկ ագրարային համալսարանի ռեկտորի հետ պետք է հանդիպեմ, որտեղ քննարկենք տնտեսության արդյունավետ ճյուղերի ստեղծումը գյուղում, որ ամեն ինչ աչքաչափով չարվի: Մեր գյուղում ամեն ինչ աճում է, անգամ ձիթապտուղ: Ցորեն, կարտոֆիլ, ձմերուկ՝ ինչ ասես կա: Մի ժամանակ ծխախոտագործությունն էր առաջատար ճյուղ, հետո պտղաբուծությունը, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությունը, բայց վաճառքի համար բավարար չէր մշակածը: Ջրագծերի խնդիրը պետք է լուծվի: Գյուղն իր ջրով բավարարված է, իր գետն ունի՝ Տավ աղբյուր ենք ասում, գյուղը բավական երկար է, մի քանի կիլոմետր երկարություն ունի: Ջրագծերի նախագծերի մի մասը կա, որոշակի հանդիպումներ ունեցել ենք ինստիտուտների հետ: Ժամանակին մի քանի ծրագիր սկսվել է ու միշտ կիսատ մնացել՝ հայտնի ու անհայտ պատճառներով: Խմելու ու ոռոգման ցանցերի նորոգումն ամենաառաջնահերթն է, հետո՝ գյուղը Բերդ կենտրոնին կապելը. եթե տրանսպորտով չեն կարողանում ապահովել (ասում են՝ գիծը շահավետ չէ)», ասում է Ռ. Փոլադյանը՝ շարունակելով պատմել նաեւ գյուղի դպրոցի 160-ամյակի մասին եւ այն, որ դպրոցը ոսկե մեդալի է արժանացել ԿԳ նախարարության կողմից: Ուրախ էր նաեւ, որ գյուղի բժշկի խնդիրը լուծվել է՝ արդեն մեկ ամիս գյուղը մշտական բժիշկ ունի, եկող ամսվանից դեղատնային կրպակի խնդիրն է լուծվելու:

Այսուհետեւ ամեն տարվա օգոստոսի երկրորդ շաբաթ օրը նշվելու է Մովսես գյուղի օր, այս տարի այն արդեն նշվել է, ընդ որում՝ մեծ շուքով. «140 հրավիրյալ կար, մեր գյուղի երիտասարդության բավականին մաս Ռուսաստանից, մեր երկրի մյուս քաղաքներից եկել էր, պաշտպանության, առողջապահության նախարարներն էին եկել, քաղծառայության խորհրդի նախագահը, թեմի առաջնորդը, մարզպետն իր տեղակալներով: Այդ տոնը նաեւ վերածվեց հետագա ծրագրերի քննարկման»:

Տրանսպորտ, գյուղի գոնե թաղամասերի լուսավորության խնդիր (ընդհանուր լուսավորությունն անջատում են ուշ երեկոյան՝ գնդակոծությունների չենթարկվելու համար), սեփական շտապ օգնության մեքենա, հնագետներ են տանելու գյուղ՝ գյուղի պատմությունն ամբողջացնելու, Մովսեսի մասին հանրագիտարանային գիրք պետք է տպագրվի, համապատասխան բուհերը գնալ եւ քննարկել, որ մովսեսցի ուսանողների կուրսայինները գյուղի պրոբլեմներին ու կառուցապատմանը վերաբերեն եւ այլն. այս բոլորը թվում է Ռ. Փոլադյանը՝ ապագայում մովսեսցիների աշխատանքի ասպարեզը կարծես հուսակեցնելով:

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐՕՐՅԱ ՎԱՆԴԱԼԻԶՄ

# Քաղաքապետի խոսքի արժեքը...

*1-ին էջից*

Քաղաքապետարանն այժմ քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ»: Սա Տարոն Մարգարյանի խոսքն է ավագանու անդամների հետ հանդիպման ժամանակ, որը հետագայում հարցազրույցներից մեկի ժամանակ մեջբերել է ավագանու անդամ Աստղիկ Գեւորգյանը՝ հավաստիացնելով, որ կառույցը անպայման պահպանվելու է, եւ խնդրել է երեւանցիներին հետեւել իր օրինակին ու հավատալ քաղաքապետի խոսքին:

«Ես ոնց ասեմ, էդպես էլ լինելու է», քաղաքապետի երդմնակալության արարողությունից հետո «**Ազգ**»-ին կարճ-կոնկրետ պատասխան տվեց մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Փաստորեն դեպքերի հետագա ընթացքն ապացուցում է, որ տիկին նախարարն ուզում էր, որ 60-ականների շինությունը «սեւ ապակիներով եվրոռեմոնտ» կառույց դառնա:

Տարիներ շարունակ «Փակ շուկա»-ի հարցով երկու կառույցները խնդիրն իրար վրա էին գցում: Քաղաքապետարանից ասում էին, որ տարածքում շինարարություն իրականացնելու թույլտվության համար դրական եզրակացություն տվել է մշակույթի նախարարությունը, իրենք ընդամենը կատարել են իրենց գործը:

Հետո էլ հայտարարում էին, որ մի քանի տասնյակ հազար դրամի տուգանք են սահմանել սեփականատիրոջ, պետության ամենահայտնի օլիգարխի, մենաշնորհի եւ լցոնվի կասկածելի որակի ապրանքների խորհրդանիշ Սամվել Ալեքսանյանի (Լֆիկի) դեմ, որովհետեւ նա քանդում է հուշարձան: Քաղաքապետարանի «միամիտ» աշխատակիցները հույս էին փայփայում, որ սեփականատերն էլ խախտումներ չի անի: Ամենայն հավանականությամբ, նրանք «Երեւան-սիթիից» առեւտուր չեն անում եւ տեղյակ չեն, որ Լֆիկը միշտ է խախտում անում՝ կեղծում շատ բան՝ օղիներից մինչեւ ատամի մածուկ, մանկական կեր ու դեղ: Շուկայի հարցում էլ Լֆիկը մնաց իր բարձունքին, եւ շինարարության հետեւանքով 4 կամար փլվեց: Յուրաքանչյուր բարձրացված աղմուկից հետո շինարարությունը կանգ էր առնում, սակայն որոշ ժամանակ անց բուլդոզերները մտնում էին տարածք, ու շինարարությունը նորից շարունակվում էր: Հաճախ Ալեքսանյանին էլ կարելի էր տեսնել շինհրապարակում՝ շինարարներին ուղղություն տալիս:

Այս ընթացքում ճարտարապետները մի քանի անգամ նամակ են գրել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին. նամակներն այդպես էլ մնացել են անպատասխան: Ու մինչ պետությունն իննք իրեն մատնել էր անգործության ու մինչ քաղաքապետարանն ու մշակույթի նախարարն իրար վրա ցեխ էին շպրտում, «Փակ շուկայի» «եվրոռեմոնտն» ավարտվեց, ու ամենայն հավանականությամբ սեպտեմբերի 15-ից հին հասցեով, բայց արդեն այլանդակված շենքում կգործի «Երեւան-սիթի» սուպերմարկետը:

Շուկայի վերաբերյալ երեկ հերթական ցնցող հայտարարությունն է արել ՀՀ կառավարությանն առընթեր Ճարտարապետության պետական կոմիտեի նախագահ **Նարեկ Սարգսյանը**: Նոր պաշտոնում Սարգսյանը քննադատել է շուկայի շինարարությունը՝ հավելելով, որ հարկերի կառուցումն անթույլատրելի է եղել: Սարգսյանը մոռացել էր, որ վերջին 3 տարին, երբ «Փակ շուկան» քանդվում էր, մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետն ինքն էր, ու իր նստավայրից մեկ կանգառ ներքեւ տեղի էր ունենում, իր խոսքերով, «հուշարձանի աղճատում»: Երկու տարվա ընթացքում Նարեկ Սարգսյանն այդպես էլ ոչ մի հայտարարություն, ոչ մի քննադատություն չներկայացրեց ու հիմա նոր պաշտոնում իրեն դնում է անհեթեթ վիճակում՝ իր անգործությունը որակելով օրենքի խախտում:

«Փակ շուկա» հուշարձանն աղճատված է, այսինքն՝ բազմաթիվ ջանքերը օգուտ չտվեցին», ասել է Նարեկ Սարգսյանը՝ հավելելով, որ Երեւանի քաղաքապետարանը ոչ մի նախագիծ չի հաստատել, նման նախագիծ բերվել է, սակայն մերժվել է, մերժվել է նաեւ այլ ատյաններում, այդ թվում՝ մշակույթի նախարարության կողմից: «Ինչ վերաբերում է նոր հարկերի կառուցմանը, ապա նշեմ, որ կամարների 50 տոկոսը մնացել է, իսկ մնացած 50 տոկոս կամարները քանդված են»:

Հարցին, իշխանություններն արդյո՞ք անզոր են օլիգարխի առջեւ, Նարեկ Սարգսյանն ասաց. «Դա էնպիսի խնդիր է, որտեղ ես որեւէ պատասխան կամ արդարացում չեմ կարող ասել: Այս հարցով ես շատ բան եմ արել, բայց ոչինչ չի հաջողվել»:

Փաստորեն առանց որեւէ թույլտվության քաղաքի կենտրոնում երկու տարի շարունակ հուշարձան է քանդվել, ու ոչ ոք չի նկատել կամ չի ցանկացել նկատել:

Այս տարի ճարտարապետները դիմել էին գլխավոր դատախազությանը՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացրել, սակայն եւս մեկ ցնցող պատասխան էլ դատախազությունից էր եկել: «Շուկայի առնչությամբ խախտում չի կատարվում»:

Փաստորեն, մեր երկրում պետական համակարգը, գերատեսչությունները, իրավապահ մարմինները, դատախազությունը ու օրենքն անզոր են, երբ հարցը վերաբերում է օլիգարխի շահերին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# Հայ-ռուսական ռազմավարական գործընկերության արդի օրակարգերի շուրջը

Սեպտեմբերի սկզբին քաղաքական-հասարակական կյանքի ակտիվացման առաջին նշանը Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների սպասվող հանդիպումն է, որի հնարավորության մասին **«Ազգ»**-ն արդեն ազդարարել է: Այսօր, երբ մեր տարածաշրջանի ժողովուրդներն անհանգստությամբ ու լարված սպասում են Սիրիայի վրա ամերիկա-անգլիա-ֆրանսիական ռազմական հարձակմանը, անվտանգության եւ ներքաղաքական կայունության մասին խոսակցությունները նոր իմաստ ու բովանդակություն են ստանում: Հայաստանի մի շարք բարձրաստիճան գործիչներ արդեն հայտարարել են, որ նոյեմբերին նախաստորագրվելու է Եվրոպական միության հետ Ասոցիացման համաձայնագիրը: Նույն տրամաբանությամբ սպասվում է, որ մոտավորապես մեկ տարի անց, 2014թ. ընթացքում այդ համաձայնագիրը կստորագրվի, եւ Հայաստանը կունենա ասոցիացման փոխհարաբերություններ ԵՄ-ի հետ: Այս հեռանկարի կապակցությամբ բազմաթիվ քաղաքական վերլուծաբաններ եւ փորձագետներ վերջին շրջանում դատողություններ են արել, թե դա ինչպես կհամատեղվի Հայաստանի՝ Մաքսային միության հետ (ինչպես նաեւ ապագա Եվրասիական միության հետ), ավելի սերտ հարաբերություններ ունենալու մեր երկրի ցանկության հետ: Մենք արդեն գրել ենք, որ տնտեսագիտական անկախ փորձագիտական եզրակացությունը Մաքսային միության հետ ավելի սերտ հարաբերությունների հնարավոր տարբերակների վերաբերյալ պետք է որ պատրաստ լինի սեպտեմբերի երկրորդ կեսին, ինչպես վստահեցնում է այդ ուսումնասիրությունը պատվիրած Զարգացման եվրասիական բանկը:

Այս քննարկումների քաղաքական ասպեկտները ավելի մատչելի են թվում եւ վերջին շաբաթների ընթացքում թե հայկական, թե ռուսական մամուլում մեկնաբանությունների եւ գնահատականների պակաս չի եղել: Ակնհայտ է, որ հայ հասարակությունն իր ամբողջության մեջ ունենալով տարբեր կողմնորոշումներ եւ տարբեր նախապատվություններ ինտեգրացիոն գործընթացների եւ Հայաստանի՝ դրանց մասնակցության վերաբերյալ, միաժամանակ հասունացած է այնքան, որ գիտակցում է կողմնորոշումների միջեւ բախում եւ առճակատում թույլ չտալու անհրաժեշտությունը: Մեր պատմաբանները հիշեցնում են 1920թ., երբ կողմնորոշումների միջեւ դեգերող Հայաստանը ծանր պարտություններ եւ ծանր կորուստներ կրեց:

Այսպիսով անկասկած է, որ հրապարակային քննարկումների կիզակետում հայտնված ինտեգրացիոն գործընթացների թեման այսպես թե այնպես հայտնվելու է հայ-ռուսական բարձր մակարդակի երկխոսության պաշտոնական օրակարգում:

### Սատարել նախագահ Պուտինի Մեծ Եվրոպա ձեւավորելու տեսլականին

Առաջ քաշելով Եվրասիական միություն ձեւավորելու գաղափարը՝ «Իզվեստիա» թերթում երկու տարի առաջ Ռուսաստանի Դաշնության նախագահը գրում էր, որ զարգացող քաղաքական գործընթացների նպատակներից մեկը Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ Մեծ Եվրոպա ձեւավորելու տեսլականն է, որը կարող է ստեղծվել Եվրոպական միության եւ ապագա Եվրասիական միության միջեւ ռազմավարական գործընկերային հարաբերությունների ձեւավորման արդյունքում: Ռուսաստանցի բազմաթիվ քաղաքական գործիչներ եւ փորձագետներ իրավացիորեն դժգոհում են, որ այս գաղափարը, չնչին բացառություններով, առայժմ ընկալում չի գտել Արեւմուտքում: Արեւմտյան քաղաքական գործիչներն ու ֆինանսա-տնտեսական շրջանակները քննարկում են մեկ այլ նոր մեծ շուկայի՝ ԱՄՆ-ի եւ Եվրոպական միության միջեւ Ազատ առեւտրի անդրատլանտյան գոտու ձեւավորման հարցը: Եթե վերաբերմունքը Ռուսաստանի եւ նրա նախաձեռնությունների նկատմամբ Արեւմուտքի քաղաքական շրջանակներում չփոխվի, ապա Մոսկվային ոչինչ չի մնում, քան զարկ տալ Մաքսային միության մեծացման եւ ապագա Եվրասիական միությանը որքան կարելի է մեծ թվով համախոհ-դաշնակիցներ ընդգրկելու բավական դժվար գործընթացին: Հենց դրա համար էլ հատուկ կարեւորություն են ստանում այդ միություններին Ուկրաինայի, Մոլդովայի, Հայաստանի եւ Կենտրոնական Ասիայի պետությունների մասնակցության հարցերը:

Հայաստանի քաղաքական շրջանակներում քննարկելով ինտեգրացիոն գործընթացների հեռանկարները՝ իբրեւ դաշնակցային պարտքի գիտակցում եւ ազդեցության երկու արտաքին վեկտորների համադրում կարծես գտնվել էր հաշտեցնող բանաձեւը. կառուցողական մասնակցություն թե եվրոպական ինտեգրման եւ թե եվրասիական ինտեգրման գործընթացներին: Այս բանաձեւն իր խորքում ենթադրում է սատարում նախագահ Պուտինի վերոհիշյալ տեսլականին: Սակայն դժվարությունն այն է, որ Արեւմուտքը թույլ չի տալիս Ռուսաստանին՝ իր հետ ձեւավորել հենց այդպիսի բարձր կարգի հարաբերություններ: Ահա թե ինչու Ռուսաստանում ցավոք են նայում ոչ վաղ անցյալում իրենց մտերիմ դաշնակիցների ինքնություն քայլերին, որոնք շարժվում են դեպի Եվրոպական միություն: Հիանալի կլիներ, եթե Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի եւ մյուսների շարժումը եվրոպական ասոցիացման ուղղությամբ համահունչ լիներ Ռուսաստան-ԵՄ վստահելի երկխոսության զարգացմանը: Հենց այդ երկխոսությունն էր, որ կհաներ կասկածներն ու լարվածությունը ոչ թե Եվրոմիության անդամ կամ թեկնածու, այլ պարզապես ասոցիացված անդամ դառնալու հետխորհրդային երկրների ցանկության նկատմամբ: Մի կարգավիճակ, որն ունեն, ասենք, Թուրքիան, Ալժիրը, Թունիսը եւ էլի շատ երկրներ: Այս կապակցությամբ տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ թվարկածս երկրներից յուրաքանչյուրն ունի ԵՄ-ի հետ տնտեսական հարաբերություններում հայտարարված բացառությունների պատկառելի թիվ կազմող շարքեր, այնինչ Հայաստանի կողմից նման բացառություններ ստանալու պահանջի մասին մեր մեջ առայժմ որեւէ խոսակցություն չկա: Բայց սա դեռ քննարկելու հարց է, եւ դրա համար ժամանակ կա: Այնինչ Մաքսային միությանն անդամակցելու համար առանձնապես ժամանակ չի մնում, որովհետեւ առաջիկա 3-4 ամիսներին քննարկվելու է ապագա Եվրասիական միության հիմնադիր փաստաթղթերի փաթեթը, եւ, ինչպես նշել է Ղազախստանի փոխարտգործնախարարը, այն պետք է պատրաստ լինի 2014թ. մայիսի 1-ին: Այսպիսով՝ ցանկությունների եւ հնարավորությունների իրականացման խաչմերուկում Հայաստանը մոտական ամիսներին պետք է գործնական մասնակցություն ունենա նաեւ Եվրասիական միության հիմնադրման գործընթացին: Սա ավելի լավ է, քան ավելի դժվար, գուցե գերբարդ պայմաններում անդամակցելը արդեն ձեւավորված եւ արդեն գործող տնտեսական միությանը:

### Ի՞նչ է հուշում Ուկրաինայի օրինակը

Հայաստանում վերջին ամիսներին տարբեր մակարդակներում բազմիցս հնչել են երկու տիպի դատողություններ. 1. Ուկրաինայի եւ Հայաստանի կարգավիճակները միմյանց նման են, եւ քաղաքական ու տնտեսական գործընթացների ծավալման իմաստով միմյանց մասին տեղեկությունները կարող են ուսանելի եւ օգտակար լինել: 2. Ուկրաինան նոյեմբերին Վիլնյուսում ոչ թե նախաստորագրելու, այլ ստորագրելու է Ասոցիացման համաձայնագիրը, ինչից հետո հաշված ամիսների ընթացքում սկսելու են գործել Եվրոմիության տեխնիկական ռեգլամենտները: Ուկրաինացի փորձագետներից մեկն ասել է, որ այդ ռեգլամենտները, որոնք ավելի փափուկ են, քան Մաքսային միության ռեգլամենտները, կարող են նպաստել Ուկրաինայում արտաքին ներդրումների ավելացմանը: Սակայն նույն փորձագետը հայտարարել է, որ ուկրաինական արտահանմանը ծանր հեռանկար է սպասում, որովհետեւ Ռուսաստանն իր սահմանները կարող է փակել ուկրաինական այն ապրանքների նկատմամբ, որոնք, դիմադրության հանդիպելով Արեւմուտքում, պետք է որ շարժվեին դեպի Արեւելք: Ուկրաինացի փորձագետները նաեւ նշում են, որ ուկրաինական արտահանման համար ծանր ժամանակները կսկսվեն Ասոցիացման համաձայնագրի ուժի մեջ մտնելուց բառացիորեն մի քանի ամիս անց, ավելի կոնկրետ՝ 2014թ. գարնանը: Ուկրաինական մեկ այլ փորձագետ հիշեցրել է, որ տարեկան երկու միլիոն ուկրաինացիներ աշխատանք են գտնում Ռուսաստանում, եւ եթե Ռուսաստանը որոշի փակել այդ աշխատանքային միգրացիայի ճանապարհը, ապա Ուկրաինայում զգալի տնտեսական հիմնախնդիրներ կառաջանան, իսկ որոշ կանխատեսումների համաձայն, երկրի արեւելյան մարզերում նույնիսկ ցնցումներ կարող են լինել: Հասկանալի է, որ Ասոցիացման համաձայնագրերը տեղ չեն թողնում այն լավատեսության համար, թե աշխատանքային միգրանտների բանակները Ռուսաստանի փոխարեն կարող են տեղաշարժվել դեպի Եվրոպա: Նման բան Եվրոպական միությունը թույլ չի տալու: Ահա թե ինչու միգրացիոն քաղաքականությունը սկսում է դառնալ ինտեգրացիոն գործընթացների վրա ազդող կարեւորագույն ոլորտներից մեկը: Մաքսային միության մեջ Ուկրաինայի ներկայացուցիչ Սուսլովը հայտարարել է, որ Ասոցիացման համաձայնագրի վավերացումը եվրոպական խորհրդարաններում կարող է նույնիսկ մի քանի տարի տեւել: Նա կարծիք է հայտնել, որ Ասոցիացման համաձայնագրի 39-րդ հոդվածը թույլ է տալիս Ուկրաինային մտնել նաեւ այլ տնտեսական միությունների եւ դաշինքների մեջ: Սրանից նա եզրակացրել է, որ Ուկրաինան պետք է ամրապնդի իր հարաբերությունները նաեւ Մաքսային միության երկրների եւ, ամբողջությամբ վերցրած, միության հետ:

### Հայ գաստարբայտերների ճակատագիրը Ռուսաստանում

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ մոտ երկու հարյուր հազար հայաստանցիներ աշխատանքի են մեկնում Ռուսաստան, եւ նրանց կողմից իրենց ընտանիքներին ուղարկված գումարները տարեկան կազմում են մոտ 1.44 միլիարդ դոլար: Ռուսաստանից Հայաստան մտնող ուղիղ տրանսֆերտները կազմում են այդ ճանապարհով Հայաստան եկող բոլոր դրամական միջոցների 85%-ը: Այդ գումարն իր հերթին կազմում է մեր երկրի բյուջեի համարյա կեսից ավելին: Սա նշանակում է, որ Ռուսաստանի հետ Հայաստանի բազմաբնույթ համագործակցության կարեւորագույն ոլորտներից մեկը հանդիսանալու է աշխատանքային միգրացիայի օրինական ծավալմանը կառուցողական մասնակցություն բերելը: Օրինակ՝ կադրերի մասնագիտական պատրաստման կամ նրանց ռուսաց լեզու սովորեցնելու ոլորտներում:

Վերջին շրջանում Ռուսաստանում բացասական վերաբերմունք կա կովկասյան տարածաշրջանից եւ Կենտրոնական Ասիայից թափանցող անօրինական միգրանտների նկատմամբ: Այդ դժգոհությունը արդեն հասել է իշխանական օղակներին, եւ նրանք երկրից անօրինական միգրանտների արտաքսման արշավ են սկսել: Կվերածվի՞ արդյոք դա նոր միգրացիոն քաղաքականության, դեռ դժվար է ասել: Հայ միգրանտների նկատմամբ առայժմ ատելության դրսեւորումներ չկան: Սակայն կարեւոր է երկկողմ միջպետական հարաբերություններում այս հարցադրումները պահելն ու դրանց լուծումներ գտնելը, որովհետեւ ինչպես Ուկրաինայի կամ Բելառուսի դեպքում, Ռուսաստանից դուրս մղվելու պարագայում հայ գաստարբայտերները Եվրոպայի աշխատանքային շուկաներում չեն հայտնվելու: Սա շատ պարզ է եւ այստեղ պատրանքներ ունենալ չի կարելի:

Համոզված ենք, որ ապագա Եվրասիական միության ձեւավորման ընթացքում աշխատուժի ազատ տեղաշարժման հետեւանքով միության երկրներում աշխատանք փնտրող հայաստանցիների թիվը միայն ավելանալու է: Ուրեմն, ինչպես նշել է ռուս փորձագետներից մեկը, հարկավոր է միության երկրներում զարգացնել միջնակարգ մասնագիտական կրթօջախների ցանցը, մարդկանց տալ պահանջվող մասնագիտություններ, ինչպես նաեւ սովորեցնել խոսել, գրել եւ կարդալ ռուսերեն ու նախապատրաստել նրանց ապագա աշխատանքային գործունեությանը: Սա ոչ միայն օրենքի տեսանկյունից կարեւոր հարց է, այլեւ մարդկային օգնություն արտագնա աշխատանքի մեկնողներին:

Վերջին ամիսների ընթացքում «բարյացակամության» եւ «բարի կամեցողության» ամենատարբեր դրսեւորումներով ինչեր ասես որ չլսեցինք հայ-ռուսական հարաբերություններում հիմնախնդիրների կամ նույնիսկ ճգնաժամի մասին: Ավելի քան համոզված ենք, որ երկկողմ պետական հարաբերություններում նման բան գոյություն չունի: Պարզապես որակյալ մասնագիտական, տնտեսագիտական ու քաղաքագիտական դիտարկումներին ու դատողություններին փոխարինելու եկան օր առաջ փնովելու հաշվին միավորներ վաստակելու մղումները: Հայ-ռուսական ռազմավարական գործընկերությանն իրականում պարզապես այլընտրանք չկա: Հայաստանյան հասարակության ցանկությունը՝ կառուցել մեր պետությունը եվրոպական չափանիշներով, հասկանալի եւ հարգանքի արժանի է: Մենք պատրաստ ենք կառուցողական մասնակցություն ունենալ ոչ միայն հայ-ռուսական բազմաբնույթ գործընկերային հարաբերությունների զարգացման մեջ, այլեւ մեր ներդրումն ունենալ Ռուսաստան-Եվրոպական միություն ռազմավարական դաշնակցային հարաբերությունների ձեւավորման դժվարին, բայց շնորհակալ գործում:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Սիրիական սադրանք

Քիմիական զենքի գործածումը կարելի է ներառել պատերազմական հանցագործությունների ցանկում, հետեւաբար քիմիական զենք բանեցնողը, թեկուզ պատերազմի ժամանակ, ռազմական հանցագործ է:

Ըստ Արեւմուտքի, նման հանցագործ է Սիրիայի նախագահ Բաշար Ասադն իր վարչակազմով: Նախագահ Ասադն ու իր համախոհները պնդում են, որ իրենք քիմիական զենք չեն բանեցրել, հետեւաբար անցած օրերին Սիրիայում քիմիական զենքի գործածումը Սիրիայի թշնամիների սադրանքն է: Նման դեպքերում, որպես կանոն, իր վճռորոշ խոսքը պետք է ասի չեզոք ՄԱԿ-ը՝ հանձինս Սիրիայում աշխատող իր տեսուչների, որոնք, իրենց հերթին, պետք է ավարտեն իրենց աշխատանքը Սիրիայում ու կազմեն համապատասխան եզրակացություն այնտեղ տեղի ունեցած ու ունեցող դեպքերի, դրանց մեղավորների մասին, որի հիման վրա նոր միայն ՄԱԿ-ը պետք է որոշում կայացնի: Ինչպես գիտենք, ԱՄՆ-ն ու իր մեկ-երկու դաշնակիցներ, առանձին նշենք նաեւ՝ Թուրքիան, Սիրիայում քիմիական զենք օգտագործվելու փաստից հետո հայտարարեցին, որ իրենք չեն սպասելու ՄԱԿ-ի համապատասխան որոշմանը եւ «պատժիչ գործողություններ» են ձեռնարկելու Սիրիայի իշխանությունների հանդեպ, առանց ՄԱԿ-ի թույլտվության:

ԱՄՆ-ն ու իր դաշնակիցները նման կերպ վարվելու փորձ ունեն, սակայն Սիրիան փոքր-ինչ այլ պատմություն է:

Եթե ԱՄՆ-ը հարված հասցնի Սիրիային առանց ՄԱԿ-ի թույլտվության, ապա վերջնականապես կհեղինակազրկի միջազգային այս՝ ամենաներառական կազմակերպությանը՝ նրա հետագա գործունեությունը լրիվ անիմաստ դարձնելով: Այնինչ, գործող, թույլ, բայց գործող ՄԱԿ-ը կարող է մշտապես լեգիտիմացնել ԱՄՆ-ի ցանկացած որոշումը, ինչպես եւ արել է ՄԱԿ-ը վերջին տարիներին: Հետեւաբար թեկուզ թույլ, բայց գործող, վերջնական չհեղինակազրկված ՄԱԿ-ը ձեռնտու է ԱՄՆ-ին: Մյուս կողմից, այս չավարտվող «արաբական գարունների» համապատկերում, ԱՄՆ-ին բոլորովին ձեռնտու չէ իր վրա բերել արաբական երկրների ու արաբ ժողովրդի ցասումը, ինչին ԱՄՆ-ը կհասնի, եթե միջազգային քաղաքականության մեջ հերթական անգամ ցուցաբերելով իր ամենաթողությունը, չսպասելով ՄԱԿ-ի եզրահանգմանը, հարված հասցնի Սիրիային:

Այդուհանդերձ, հակասիրիական պատերազմը իրոք մոտալուտ եւ անխուսափելի է թվում, պատերազմ, որը, ըստ մի շարք մասնագետների, սադրանքի արդյունք կարող է լինել: Այսկերպ կարծող մասնագետներից մեկը Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանն** է: Երեկ, լրագրողների հետ հանդիպմանը, Սաֆրաստյանը կարծիք հայտնեց, որ Սիրիայում քիմիական զենքի բանեցումը իրականում սադրանք էր, որի նպատակն էր շուտափույթ պատերազմ սկսել Սիրիայի դեմ ու վերջնականապես մեկուսացնել նախագահ Ասադին: «Ըստ որում, այդ սադրանքը կարող է եւ հրահրված չլինել Արեւմուտքի, կոնկրետ ամերիկյան իշխանությունների կողմից,- ասել է Սաֆրաստյանը՝ հավելելով,- չնայած գուցե ամերիկյան որոշ շրջանակներ եւս կան այս սադրանքի կազմակերպման մեջ»: Իսկ ավելի կոնկրետ, ըստ արեւելագետի, «սիրիական սադրանքը» հրահրված էր «տարածաշրջանն ամբողջովին ու երկարատեւ ռազմական գործողությունների մեջ քաշել եւ տարածաշրջանային քարտեզն ու ուժերի հարաբերակցությունը փոխել ցանկացող ուժերի կողմից»: Այդ ուժերի թվում Սաֆրաստյանը նշեց նաեւ Թուրքիային: «Պատահական չէ, որ Սիրիայում քիմիական զենքի օգտագործումից հետո առաջինը հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն՝ անելով աննախադեպ (Թուրքիայի համար) հայտարարություն, թե իրենք չեն սպասի ՄԱԿ-ի թույլտվությանն ու պատրաստ են պատժել սիրիական իշխանություններին», նկատեց Սաֆրաստյանը:

Հիշեցնենք նաեւ, որ, բացի սրանից, հենց Ստամբուլում հավաքվեցին «Սիրիայի բարեկամները»՝ քննարկելու սիրիական ստեղծված ճգնաժամն, արդեն այդ երկրում օգտագործված քիմիական զենքի համապատկերում: Հասկանալի է, որ քսան երկրի ներկայացուցիչների մասնակցությամբ նման քննարկում կազմակերպելու համար պետք է նախօրոք նախապատրաստվել, մինչդեռ Ստամբուլը...տպավորություն կար, որ արդեն իսկ պատրաստ էր:

Ռուբեն Սաֆրաստյանը ընդգծեց, որ Թուրքիան տարածաշրջանի այն եզակի երկրներից է, եթե ոչ միակը, որը բացահայտ թշնամաբար է տրամադրված Ասադի վարչակազմին ու շահագրգռված է Սիրիայում իրավիճակի փոփոխությամբ, այդ երկրի միջազգային դիրքի ու դեռեւս տիրապետած ռեսուրսների թուլացմամբ: Ինչպես համոզված է Սաֆրաստյանը՝ «Տիրելով Սիրիային, կարող ես տիրել ողջ արաբական Մերձավոր Արեւելքին», իսկ նման ցանկություն, Թուրքիան, իհարկե, կարող է ունենալ: Անկարան թաքուն հույսեր է փայփայում նաեւ Սիրիայի հյուսիսային շրջանների հանդեպ, երբ Սիրիայում «գործող իշխանության անկումից հետո» ընթանա երկրի մասնատման գործընթաց: Եվ վերջապես, Սիրիայում է կենտրոնացած հայկական սփյուռքի այն մասը, որն անմիջականորեն ասոցիացվում է արեւմտահայության հետ. սիրիահայերը, թերեւս ավելին քան որեւէ այլ գաղթօջախի ներկայացուցիչներ, Ցեղասպանության ուղղակի վերապրածներն են, դրա կենդանի վկաները: Հասկանալի է, որ Թուրքիան շահագրգռված է նման վկաների վերացմամբ, այն էլ Ցեղասպանության 100-րդ տարելիցի շեմին:

Փաստորեն Թուրքիան բազմաթիվ ծանրակշիռ շարժառիթներ ունի Սիրիայում կործանիչ պատերազմ սադրելու համար: Բայց որքան ուշանում է Սիրիային հասցվելիք Արեւմուտքի հարվածը, այնքան չեզոքանում է այդ սադրանքի էֆեկտը, եւ փառք Աստծո:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԹԵՀՐԱՆ

# Իրանն ԱՄՆ-ի դեմ հայց կհարուցի 1953 թ. հեղաշրջման համար



**Իրանի խորհրդարանը առաջին ընթերցմամբ ընդունել է օրենք, որը կառավարությանը պարտավորեցնում է ԱՄՆ-ի դեմ հայց հարուցել 1953 թ. պետական հեղաշրջմանը ԿՀՎ-ի մասնակցության համար: Այդ հեղաշրջման հետեւանքով Իրանում տապալվել էր ժողովրդավարական ուղիով ընտրված ղեկավարությունը, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Փաստաթղթի օգտին քվեարկել են 167, դեմ՝ 5 պատգամավորներ:**

**Օրինագծի տեքստի համաձայն, Իրանում կստեղծվի հատուկ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1953 թվականի իրադարձությունների բոլոր նյութերն ու հանգամանքները, իսկ ուսումնասիրությունն ավարտելուց կես տարի հետո ծավալուն հաշվետվություն կպատրաստի կատարված աշխատանքի վերաբերյալ:**

**Իրավաբանների եւ պատմաբանների հետեւությունների վրա հիմնվելով՝ կառավարությունը ԱՄՆ-ի դեմ հայց կներկայացնի ՄԱԿ-ի Միջազգային դատարանին:**

**Իրանի խորհրդարանը տվյալ թեմային անդրադարձավ այն բանից հետո, երբ ԱՄՆ-ում գաղտնազերծվեցին փաստաթղթեր 1953-ին Իրանի վարչապետ Մոհամմեդ Մոսադդեղի տապալմանը ԿՀՎ-ի ակտիվ մասնակցության վերաբերյալ:**

**Հեղաշրջման հետեւանքով վերականգնվել էր միապետությունը շահ Ռզա Փեհլեւիի գլխավորությամբ, որն Իրանում հաստատել է միահեծան վարչակարգ: Շահը իր հերթին տապալվել էր 1979 թ. Իսլամական հեղափոխության ժամանակ:**

# Աֆղանստանում 15 ոստիկան է սպանվել

**Մինչ ՆԱՏՕ-ի զինծառայողները պատրաստվում են 2014-ին հեռանալ Աֆղանստանից, երկրում բռնարարքների նոր ալիք է ծավալվում: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ օգոստոսի 29-ին Աֆղանստանի արեւմուտքում գտնվող Ֆարահի նահանգում թալիբները սպանել են 15 ոստիկանների: Նահանգապետ Աբդուլ Ռահման Ջուվանդիի խոսնակը լրագրողներին պատմել է, որ նահանգային գլխավոր ավտոճանապարհի վրա թալիբները ծուղակ էին սարքել ոստիկանների համար: Երբ ոստիկանության պահակախումբը եկել էր ճանապարհային ոստիկանության զորամիավորում՝ տեսչական ստուգման, թալիբները հարձակման էին անցել: Սպանվել էին 15 եւ վիրավորվել 10 ոստիկաններ: Սպանվել էին նաեւ մի քանի թալիբներ:**

**Նախօրեին ՆԱՏՕ-ի զինծառայողների վրա ապստամբների կատարած հարձակման ժամանակ սպանվել էր 16 մարդ, այդ թվում՝ 1 ամերիկացի զինծառայող, վիրավորվել էին տասնյակ մարդիկ:**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** չեխական «Կարմա» գազի վառարան
Հեռ.՝ 094-48-68-03

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

ՇՏԱՊ վաճ. է 3 սեն. բն. Դեմիրճյան 27/1 բն. 30 հասցեում, 5 հարկանի քարե շենքի բարձր 1-ին հարկում: Վերանորոգված, տաք եւ սառը ջուր, 2 նկուղ, ավտոկայանատեղ, կահավորված: Հնարավոր է կահույքով եւ առանց կահույքի: Ունի առաջ գնալու մեծ հնարավորություն: Գինը՝ 120.000 $-ին համարժեք դրամ: Մակերեսը՝ 80.3 քմ:

Հնարավոր է օրավարձով՝ գինը՝ 50 $-ին համարժեք դրամ:

Հեռ.՝ 091-58-78-05

## Ընդունելությունը Մանկավարժականում շարունակվում է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը շարունակում է 2013-2014 ուսումնական տարվա մագիստրոսական ծրագրի հեռակա ուսուցման ընդունելությունը 3 մասնագիտությունների գծով՝ հայոց լեզու եւ գրականություն, մանկավարժություն եւ մեթոդիկա /տարրական կրթություն/,իրավագիտություն /մանկավարժություն/:

Ի դեպ, Մանկավարժական համալսարանում ուսման վարձերը չեն թանկացել:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 20-ը:

Ընդունելության մասին հավելյալ տեղեկատվություն կարող եք ստանալ armspu.am կայքի <Դիմորդ> բաժնից կամ զանգահարելով 59-70-69 հեռախոսահամարով:

# Գերմանիայի նախկին նախագահին կդատեն



Ստորին Սաքսոնիայի երկրամասային դատարանը քննում է Գերմանիայի նախկին նախագահ Քրիստիան Վուլֆի դեմ դատախազության ներկայացրած հայցը: «Շպիգել» հանդեսի տվյալներով, գործի առթիվ լսումները սկսվելու են նոյեմբերի 1-ին Հաննովերում:

Նույն գործով անցնում է նաեւ կինոպրոդյուսեր Դավիդ Գրյոնեւոլդը: Վուլֆին մեղադրում են պաշտոնեական դիրքից ապօրինաբար օգտվելու, իսկ Գրյոնեւոլդին՝ պաշտոնատար անձի կաշառելու մեջ:

Դատաքննության առիթը Վուլֆի 2008 թ. ուղեւորությունն է Մյունխենի «Օկտոբերֆեստ» փառատոն: Գրյոնեւոլդը իր վրա էր վերցրել Ստորին Սաքսոնիայի այն ժամանակվա վարչապետ Վուլֆի ծախսերի մի մասը (1000 եվրո): Մյունխենից վերադառնալուց հետո Վուլֆը «Սիմենս» ընկերությանը խնդրել էր ֆինանսական օգնություն հատկացնել կինոպրոդյուսերի նոր նախագծին: Նամակը գրվել էր երկրամասային վարչակազմի պաշտոնական բլանկի վրա:

2010-2012 թթ. Գերմանիայի նախագահի պաշտոնը զբաղեցրած Վուլֆի դեմ նրա պաշտոնավարությունից հետո ներկայացվել են մի շարք մեղադրանքներ, որոնց մի մասը դատախազությունում նախնական ստուգումներից հետո հերքվել էին:

# Մշակույթ

# Լեզվական նոր իրողությունների ֆոնին...

Մեծ փոփոխությունների յուրաքանչյուր շրջանում հոգեւոր-մտային ոլորտի՝ դրանց ազդեցության առաջին կրողը լեզուն է: Մեր ժամանակներում այս երեւույթը առավել քան նկատելի է, երբ կյանքը ասես երկատված լինի, եւ մարդկության մի մաս իր կյանքը տեղափոխել է վիրտուալ իրականություն, ապրելով դա ավելի քան ռեալ իրականության մեջ: Սոցիալական ցանցերը դարձել են մարդկանց հանդիպումների ու շփումների ամենամատչելի եւ արդեն անհրաժեշտ վայր, ընդ որում ամենահետաքրքրականը՝ սահմաններ չճանաչող՝ ազգային, լեզվական, մշակութային, կրոնական եւ այլ պայմանականություններից հաճախ զերծ: Բացի մարդկային պարզ շփումներից այստեղ աշխատանքային, մասնագիտական քննարկումները, կարծիքները, խորհուրդները նույնպես տարածված եւ սովորական են դարձել: Անհատներ կան, որ նույնիսկ անհավանական գաղափարական ծրագրեր են փորձում իրագործել՝ ստեղծելով գաղափարակից համախոհների շրջանակ: Անգամ հոգեւոր-կրոնական կյանքն է թափանցել այստեղ. ասել է թե՝ կյանքային իրականության հայելային անդրադարձն է այս երեւույթը:

Այստեղ հետաքրքրական է դիտվում նաեւ լեզվական տրանսֆորմացիաների փաստը, արդյոք կիրառվող բանավոր լեզուն նույնությամբ տեղափոխվում է այս երկրորդ կյանք: Ակնհայտ՝ արդեն ձեւավորված է յուրատեսակ, համընդհանուր լեզվական մի կաղապար, որ օգտագործում են սոցցանցերի (ֆեյսբուք եւ այլ) օգտատերերի մի զգալի մասը, անկախ կրթական ցենզից, մտածողական մակարդակից, աշխարհայացքից եւ այլն: Նկատի չունենալով հատուկ մշակված նշանային լեզուն, այստեղ կարելի է հանդիպել խոսքային այնպիսի ձեւագոյացումների, որը ստիպում է մտածել տալ նոր՝ համընդհանուր լեզվաստեղծման անհրաժեշտության մասին: Հատկապես տարածված է համառոտագրության ձեւը եւ տարբեր բառերի, արտահայտությունների մշակված-սարքված-հորինված գրությունները իրենց նոր նշանակությամբ սկսում են լայն տարածում գտնել, շրջանառվել: Այսպես լիիմաստ բառերը գրությամբ համարժեքվում են երկու, երեք, երբեմն մեկ տառի, հաճախ ուղեկցվում թվային համադրությամբ: Այս ամենը միտված է հարաբերությունների հնարավորին պարզեցման, դրանք առավելագույն արագության հասցնելուն եւ հեշտացնելուն եւ, որից էլ՝ մտածողության պարզագույն մակարդակների իջեցումը: Չէ՞ որ խոսքը մարդու ներքին մտածողության բառային, հնչյունային արտահայտությունն է: Լեզվի այսչափ կենցաղայնացումը եւ աղքատացումը մարդու ներքին աշխարհի բնական վիճակների դրսեւորումն է եւ յուրաքանչյուրի գրավոր թե բանավոր խոսքը, նրա ամենաբնութագրական եւ անհատական հատկանիշն է: Սոցցանցերում անհատականություն ասվածը գրեթե վերացված է, ինքնին շփումների այսպիսի ձեւը դրա անհրաժեշտությունն ու կարեւորությունը հասցնում է նվազագույնի: Ինքնատիպությունը պահպանում են մտավորական դաշտի որոշակի ինդիվիդուալ առանձնահատկությամբ օժտված մարդիկ միայն, որոնք էլ շատ սակավ են:

Լեզվական տրանսֆորմացիաների սոցցանցային առկա այս ֆոնին արդեն անուշադիր ես սկսում դառնալ հեռուստատեսության, տպագիր մամուլի, հասարակական տարբեր վայրերում տեղադրված հայտարարությունների, զանազան այլ տեքստերի հայերենի աղավաղված դրսեւորումներին: Բայց այդուհանդերձ բաներ կան, որ զարմացնում են. հնարավո՞ր է, որ տասնյակ տարիների գործունեությամբ իրեն առաջատար կրթարան համարող հաստատության ուսումնական ընդունելության հայտարարության մեջ թույլ տրվեն ուղղագրական այնպիսի սխալներ, ինչպես՝ էտիկա, էստետիկա բառերի գրությունները: Այնքան շատ են մեր շուրջը նման սխալագրությունները, չգիտես, որին անդրադառնաս: Մի օրինակ միայն՝ մազերի ներկերից մեկի (Lady Style) ուղեցույց թերթիկին ի թիվս մի շարք լեզուների, ցուցումներ տրված են նաեւ հայերեն, որտեղ հանդիպում ես ահա այսպիսի արտահայտությունների. «Մազերի ներկանյութը կարող է առաջացնել ալերգիայի ծանր ռեակցիա», «Խուսափել նյութի հպումը աչքերի հետ»: «Սեւ հինայով դաջվածքը կարող է ալերգիայի ռեակցիայի առաջացմանը օգնի»: «Մի ներկեք Ձեր մազերը, եթե ունեք երեսի վրա ցան, գանգամաշկի բորբոքում կամ վերք, եւ կամ եթե արդեն ունեցել եք անցյալում ոեւե ռեակցիա»: «Կրեմ-ներկի տյուբիկը կափարիչով ծակեք եւ սրվակի ամբողջ պարունակությունը լցրեք թթվացուցիչի սրվակի մեջ: Պինդ փակեք սրվակը եւ լավ շարժեք մինչեւ ստացվի հարդ խառնուրդ»: Այսպիսի սխալաշատ արտահայտություններով «հարստացած» են գրեթե բոլոր ապրանքատեսակների այսպես կոչված գրավոր մեկնաբանությունները: Մենք սովորել ենք եւ էական չենք համարում նման բաները: Դե ներկ է, թղթի կտոր, վրան ինչ է գրված, ոնց է գրված, կարեւո՞ր է: Իրականում հոգեբանության վրա ազդում է, այդ ապրանքատեսակը կարծես արժեզրկվում է, համենայն դեպս մտածում ես հաջորդ անգամ՝ գնես, թե՞ ոչ:

**Ս. Բ.**

# Կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի ստեղծագործություններն արդեն ժողովածուի տեսքով

Լույս է տեսել կոմպոզիտոր «Խաչատուր Ավետիսյանի երգերը» ժողովածուն, որտեղ տեղ են գտել նրա բոլոր ստեղծագործությունները:

Կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի որդին՝ Միքայել Ավետիսյանը, երեկ լրագրողներին տեղեկացրեց, որ 55 երգ է տեղ գտել այդ ժողովածուում: Գիրքը լույս է տեսել լիբանանահայ բարերար Հարություն Խաչատրյանի օժանդակության շնորհիվ, եւ տպագրվել՝ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: Ի դեպ՝ սեպտեմբերի 17-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում կկայանա համերգ, որի ընթացքում կհնչեն Խաչատուր Ավետիսյանի եւ Լյուդվիգ Դուրյանի լավագույն ստեղծագործությունները՝ «Կռունկներ», «Եղեգ», «Սիրուն գիշեր», «Վայ



լե-լե-լե», «Որտեղ գտնեմ քեզ» եւ այլ սիրված ու հիթային ստեղծագործություններ: Ինչպես տեղեկացրեց Միքայել Ավետիսյանը, առաջիկայում նախատեսում է լույս ընծայել նաեւ կոմպոզիտորի կտավների ժողովածուն, ինչպես նաեւ քանոնի համար գրած ստեղծագործությունները. «Եղեռնի 100-ամյակի կապակցությամբ 80-ական թվականներին գրել է «Օրատորիա» անվամբ ստեղծագործություն, որն արդեն ձայնագրվել է: Այս ստեղծագործությունը կատարվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով, բայց ոչ հայերենով: Այն հնչել է Բելգիայում, Շվեյցարիայում, Մալազիայում, Հոլանդիայում եւ այլ երկրներում: Շատ գեղեցիկ ստեղծագործություն է, որն առաջին անգամ կհնչի Եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ»:

**Ս. Հ.**

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱԿՑԻԱՆԵՐ

# Մշակույթի կարոտ սահմանամերձ գյուղերում




**Հայաստանի ու Արցախի սահմանամերձ գյուղերը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով ԱԺ պատգամավոր, երգչուհի Շուշան Պետրոսյանը ձեռնամուխ է եղել է այդ գյուղերում իրականացնելու մշակութային մի շարք միջոցառումներ ու ծրագրեր: Երեկ «Նոյյան տապան» ակումբում՝ ասուլիսի ժամանակ երգչուհին պատմեց, որ նախաձեռնության գաղափարը հղացել է Մարտակերտի մշակույթի տանը, որտեղ չնայած շենքային նորոգված պայմաններին՝ ներսում մշակութային որեւէ խմբակ չի գործել:**

**Երգչուհին ասում է՝ դրանից հետո, գործի դնելով մշակույթի այն լծակները, որոնք իսկապես ուժեղ են, վերաբացել է մշակույթի տան 5 խմբակ: Խմբակների վերաբացմանը հաջորդել են դպրոցներում կազմակերպվող ցուցահանդեսները: Ապա «Փյունիկ» հիմնադրամի օգնությամբ վերաբացել է Հաղրութի ու Մատաղիսի դպրոցների քիմիայի, կենսաբանության ու ֆիզիկայի դասասենյակները, Մայյան թատրոնը հանդես է եկել ներկայացումներով Մարտակերտում եւ Թալիշում:**

**Շուշան Պետրոսյանը նշում է՝ եթե տեսնեք մարդկանց ուրախությունը, ապա կհասկանաք, թե այնտեղ մարդիկ որքան կարոտ են մշակույթի:**

**Ի դեպ, Շուշան Պետրոսյանի ծրագրերը հասվել են Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության եւ «Թալիշի պաշտպան» ՀԿ-ի համատեղ ծրագրին, որի իմաստն այն է, որ Արցախի սահմանամերձ Թալիշ գյուղի համար կատարվի բարեգործական ակցիա, որպեսզի գյուղն ունենա որակյալ ինտերնետ կապ: Իսկ դպրոցին ու մի քանի հասարակական կազմակերպություններին ինտերնետ կապը կտրամադրվի անվճար: Ներկայումս ծրագիրն ընթացքի մեջ է, եւ դրա իրագործման համար կազմակերպվել է դրամահավաք: Բնականաբար, ինտերնետի մուտքը Թալիշ ծնունդ կտա ուրիշ նոր ծրագրերի ու նախաձեռնությունների, եւ կակտիվացնի արտաքին աշխարհի հետ բնակիչների կապը:**

**Երգչուհի Շուշան Պետրսյանը, ամփոփելով թեման եւ անդրադառնալով Թալիշ գյուղը որակյալ ինտերնետով ապահովելու ծրագրին, եզրակացնում է՝ նմանօրինակ նախաձեռնությունները կյանքի կոչելու համար ընդամենը ցանկություն է պետք:**

**Երգչուհին հավելում է. «Ես շատ ուրախ եմ, որ Ազգային ժողովի պատգամավոր եմ եւ կարող եմ ծառայեցնել դա մշակույթին»:**

**Ի. Պ.**

# «Չարաբաստիկ» համբույրի մասին

**Երգչուհի, ԱԺ պատգամավոր Շուշան Պետրոսյանը բողոքի ակցիայի ժամանակ ակտիվիստին համբուրելը համարում է զուտ մարդկային վարք: Երեկ ասուլիսի ժամանակ նա այսպիսի պատասխան տվեց ոստիկանի «չարաբաստիկ» համբույրի մասին հարցին:**

**Հիշեցնենք, որ օրերս Կոմիտասի 5 հասցեում բողոքի ակցիաներից մեկից հետո համացանցում տարածվեց լուսանկար, թե ինչպես է ոստիկանը համբուրում ակտիվիստ աղջկան:**

**«Համբույրի մեջ վատ բա՞ն կա, ավելի լավ չէ՞ համբույր, քան ծեծկռտուք», ասաց Շուշան Պետրոսյանը, «Դուք ծանո՞թ եք այդ աղջկան, կարող է այդ աղջկա սիրած տղան է եղել»:**

**Իհարկե, համբույրը ծեծկռտուքից գերադասելի է, բայց դա էլ պետք է լինի հարմար տեղում, հարմար ժամանակին եւ ոչ հակառակ համբուրվողի կամքի: Ամեն դեպքում, ոստիկանի համբույրի մասին այսքան շատ խոսակցություններն էլ անտեղի են, մանավանդ որ աղջիկը տեղյակ չի եղել ու մինչեւ հիմա էլ չի հասկանում, թե ինչպես եղավ, որ համբուրեցին իր պարանոցը:**

**Ի. Պ.**

# Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանը՝ «Եվրոպական ժառանգության օրերին»

**Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը կբացվի ցուցահանդես, որտեղ ներկայացված կլինեն թանգարանի արխիվում պահվող նոտաների անվանաթերթերի եւ ազդագրերի լավագույն նմուշները: Այս մասին «Արմենպրես»-ին հայտնում են տուն-թանգարանից: Ցուցահանդեսը կգործի «Եվրոպական ժառանգության օրերի» շրջանակում:**

**Ցուցադրված նմուշներից շատերը հրատարակված են համաշխարհային տպագրական մշակույթի մեջ մեծ դեր խաղացած հրատարակչատների կողմից՝ ներկայացնելով 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի տպագրական մշակույթի նվաճումները: Առանձնանում են Մ. Բելյաեւի (Լայպցիգ), Պ. Յուրգենսոնի (Մոսկվա), Վ. Բեսսելի (Մոսկվա - Ս.Պետերբուրգ), Ա. Գուտխեյլի (Մոսկվա) եւ Մ. Բեռնարդի (Ս. Պետերբուրգ) երաժշտական հրատարակչատներում լույս տեսած նոտաները: Այդ հրատարակչություններից մի քանիսը շարունակում են իրենց գործունեությունը մինչ օրս: Այս տպագրատներում հրատարակվել են Բախի, Բեթհովենի, Սեն-Սանսի, Չայկովսկու, Գլինկայի, Գլազունովի, Սպենդիարյանի եւ այլոց գործերը: Ցուցադրության գաղափարի եւ ձեւավորման հեղինակն է երիտասարդ նկարիչ-դիզայներ Լիլիթ Արշակյանը: Ցուցահանդեսը կբացվի օգոստոսի 31-ին, տուն-թանգարանի դահլիճում:**

# Ղազախական հեքիաթն ավարտվեց

## *Գեւորգ Ղազարյանը թիմակիցների հետ պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայում*



Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի բոլոր 32 մասնակիցները: Վերջին 5 ուղեգրերին տիրեցին «Միլանը», «Ռեալ Սոսյեդադը», «Վիկտորիան», «Սելթիկն» ու «Զենիթը»:

Կարագանդայի «Շախտյորին», որի կազմում հանդես է գալիս Գեւորգ Ղազարյանը, չհաջողվեց խոշոր անակնկալ մատուցել ու խմբային մրցաշարի ուղեգիր նվաճել: «Շախտյորը» Գլազգոյում «Սելթիկին» պարտվեց 0-3 հաշվով, ընդ որում մրցակցության ելքը վճռած 3-րդ գնդակը դաշտի տերերը խփեցին ավելացված ժամանակի 2-րդ րոպեին: Այսպես ղազախական հեքիաթն ավարտվեց: «Շախտյորը» պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարում:

Խաղից հետո «Շախտյորի» գլխավոր մարզիչ Վիկտոր Կումիկովը հետեւյալ կարծիքն է հայտնել. «Մենք պարտվեցինք մի թիմի, որն իր կարգով ու ֆուտբոլիստների անհատական վարպետությամբ գերազանցում էր մեզ: Իհարկե, ցավալի է, որ հանդիպման ելքը վճռվեց ավելացված ժամանակում: Սակայն դաշտի տերերն առավելություն ունեին եւ արդարացիորեն հաղթեցին: Ինչ արած, պայքարը կշարունակենք Եվրոպայի լիգայում»:

Հետաքրքրական է, որ խաղի նախօրեին կայացած մամուլի ասուլիսում Վիկտոր Կումիկովը հայտարարել էր, որ «Շախտյորին» ավելի ձեռնտու է Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարում հանդես գալը. «Մեր գլխավոր խնդիրը եվրոպական մրցաշարի խմբային փուլ մտնելն էր, ինչին հասանք: Իհարկե, մեզ այժմ միայն մեկ քայլ է բաժանում չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարից: Մենք ցանկանում ենք արդյունքի հասնել: Սակայն պարտությունը մեզ համար ողբերգություն չի լինի: Կարծում եմ, որ դա նույնիսկ ավելի լավ կլիներ, որովհետեւ ֆուտբոլում հարկավոր է աստիճանաբար զարգանալ»:

Հարկ է նշել, որ պատասխան խաղից առաջ անցկացված հարցման արդյունքներով պարզվել էր, որ «Շախտյորի» երկրպագուների 60 տոկոսը չի հավատում թիմի վերջնական հաջողությանը «Սելթիկի» հետ մրցավեճում: Թիմի երկրպագուներից մեկի համար հանդիպման արդյունքը ողբերգական դարձավ: 56-ամյա տղամարդը շատ էր վշտացել «Շախտյորի» անհաջողությունից: Նրա ինքնազգացողությունը կտրուկ վատացել էր: Բժիշկներին չէր հաջողվել փրկել հիվանդի կյանքը:

«Միլանը» սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթեց «Էյնդհովենին»: Մրցակիցների առաջին հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի` 1-1:

«Զենիթը» պորտուգալական «Պասուշ դե Ֆեռեյրայի» հետ սեփական հարկի տակ անցկացրած խաղում էլ հաղթեց 4-2 հաշվով (առաջինում գրանցվել էր 4-1 հաշիվ): Իսպանական «Ռեալ Սոսյեդադն» էլ կրկին 2 անպատասխան գնդակ ուղարկեց ֆրանսիական «Լիոնի» դարպասը: Պլզենի «Վիկտորիան» էլ 2-րդ հաղթանակը տոնեց Սլովենիայի «Մարիբորի» նկատմամբ (1-0) ու կշարունակի պայքարը չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Հիշեցնենք, որ ներկայումս հենց «Վիկտորիայի» ֆուտբոլիստ է համարվում Էդգար Մալաքյանը, որը սակայն վարձավճարով հանդես է գալիս «Բանանցում»:

Երեկ շվեյցարական Նիոն քաղաքում կայացավ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Դորտմունդի «Բորուսիան» ընդգրկվեց F խմբում, որտեղ մրցելու է «Արսենալի», «Մարսելի» եւ «Նապոլիի» հետ: Մյուս խմբերի կազմն այսպիսին է:

A - «Մանչեսթր Յունայթեդ», «Շախտյոր», «Բայեր», «Ռեալ Սոսյեդադ»:

B - «Ռեալ», «Յուվենտուս», «Գալաթասարայ», «Կոպենհագեն»:

C - «Բենֆիկա», ՊՍԺ, «Օլիմպիակոս», «Անդերլեխտ»:

D - «Բավարիա», ԲԿՄԱ, «Մանչեսթր Սիթի», «Վիկտորիա»:

E - «Չելսի», «Շալկե-04», «Բազել», «Ստյաուա»:

G - «Պորտո», «Ատլետիկո», «Զենիթ», «Աուստրիա»:

H - «Բարսելոնա», «Միլան», «Այաքս», «Սելթիկ»:

# «Ռեալի» երկրպագուները համամիտ են Կասիլյասի հետ



**Իսպանական «Մարկայի» ընթերցողների մոտ 75 տոկոսի համոզմամբ, Մադրիդի «Ռեալի» եւ երկրի ազգային հավաքականի դարպասապահ Իկեր Կասիլյասը բարոյական իրավունք ունի հեռանալու արքայական ակումբից, քանի որ հայտնվել է պահեստայինների նստարանին: Թիմի նոր գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտտին առաջնության մեկնարկային 2 խաղերում դարպասի պաշտպանությունը վստահել էր Դիեգո Լոպեսին, որը դարձել է «Ռեալի» հիմնական դարպասապահը: Վերջինս անցած մրցաշրջանում փոխարինել էր վնասվածք ստացած Կասիլյասին:**

**Փորձառու դարպասապահով մի շարք թիմեր են հետաքրքրված, որոնց թվում է նաեւ «Բարսելոնը»: Սակայն «Ռեալի» երկրպագուները հորդորել են Կասիլյասին չլքել կապտասպիտակ ակումբը:**

**Թեեւ Կասիլյասը հայտնվել է «Ռեալի» պահեստայինների նստարանին, սակայն Իսպանիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեն նախկինի պես վստահում է նրան: Իսկ վերջինիս խաղային պրակտիկա է անհրաժեշտ 2014-ի աշխարհի առաջնությունում դարպասը հուսալիորեն պաշտպանելու համար: Ի դեպ, Կասիլյասը վերջերս հայտարարել է, որ ֆուտբոլի աշխարհի առաջնությունից հետո հրաժեշտ է տալու Իսպանիայի հավաքականին, որի կազմում անցկացրել է 149 խաղ: Այս ցուցանիշը ռեկորդային է իսպանացի ֆուտբոլիստների մեջ: Եվրոպական երկրների ազգային հավաքականների խաղացողների մեջ Կասիլյասի արդյունքը 4-րդն է Վիտալի Ասաֆեւից (167 խաղ), Մարտին Ռեյմից (157) եւ Լոթար Մաթեուսից (150) հետո: Այս ֆուտբոլիստներն ավարտել են իրենց կարիերան, այնպես որ Կասիլյասը կարող է շրջանցել նրանց:**

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը կմասնակցի շախմատային փառատոնին

**Armchess.am-ի տեղեկացմամբ Լեւոն Արոնյանը կմասնակցի դեկտեմբերի 12-19-ը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում համաշխարհային մտավոր խաղերի ծրագրով անցկացվելիք շախմատի մրցումներին: Կանցկացվեն արագ, «կույր» շախմատի եւ կայծակնային խաղի մրցաշարեր:**

**Պեկինում Արոնյանի մրցակիցները կլինեն Կարյակինը, Գրիշչուկը, Մամեդյարովը, Դոմինգեսը, Պոնոմարյովը, Ռաջաբովը, Լե Քուան Լիեմը, Վան Հաոն, Վան Յուե, Նեպոմնյաշչին, Վաշիե-Լագրավը, Կամսկին, Լեկոն, Իվանչուկը եւ Գիրին:**

# Մխիթարյանը գոլի հեղինակ

**Դորտմունդի «Բորուսիան» ստուգողական խաղում 8-0 հաշվով հաղթել է «TV Հիսֆելդին»: Այդ խաղում հաշիվը 21-րդ րոպեին բացել է Հենրիխ Մխիթարյանը: Քիչ անց նրա փոխանցումից հետո գոլի հեղինակ է դարձել Շիբերը: Հենրիխը մասնակցել է միայն առաջին խաղակեսին, իսկ ընդմիջումից հետո նրան փոխարինել է Ռոբերտ Լեւանդովսկին:**

# Անհաջող մեկնարկ

**Բուլղարիայում մեկնարկել է ֆուտզալի Եվրոպայի ակումբային գավաթի խաղարկությունը: Հայաստանի չեմպիոն «Շահումյանը» շատ անհաջող սկսեց մրցաշարը` 0-6 հաշվով պարտվելով բուլղարական «Վառնային»: Հաջորդ խաղում «Շահումյանը» կմրցի «Ժելեզարեցի» հետ:**

# Աշխարհի գավաթը կվիճարկեն Կրամնիկն ու Անդրեյկինը

**Նորվեգիայում ընթացող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան եզրափակիչի մասնակիցները: 4 պարտիայից բաղկացած մրցախաղում աշխարհի գավաթը կվիճարկեն Վլադիմիր Կրամնիկն ու Դմիտրի Անդրեյկինը:**

**Կրամնիկն արագ շախմատի մրցախաղում 1,5-0,5 հաշվով առավելության հասավ Մաքսիմ Վաշիե-Լագրավի նկատմամբ: Նույնպիսի արդյունքով Դմիտրի Անդրեյկինը պարտության մատնեց Եվգենի Տոմաշեւսկուն, որը 3-րդ փուլում պայքարից դուրս էր մղել Լեւոն Արոնյանին: Եզրափակիչ մրցախաղի 1-ին պարտիան կկայանա այսօր:**

# Ֆրանկ Ռիբերին Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ



Մյունխենի «Բավարիայի» եւ Ֆրանսիայի հավաքականի կիսապաշտպան Ֆրանկ Ռիբերին ճանաչվել է անցած մրցաշրջանի Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ: Պատվավոր մրցանակի համար պայքարում Ռիբերին գերազանցեց իսպանական «Բարսելոնի» եւ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսիին ու Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուին:

Երեկ Մոնտե Կառլոյում կայացած մրցանակաբաշխության ժամանակ Ռիբերիին մրցանակը հանձնեց ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին: Ֆրանսիացի ֆուտբոլիստն իր կարիերայի ընթացքում առաջին անգամ արժանացավ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսին: Հիշեցնենք, որ մրցանակի նախորդ դափնեկիրն Անդրես Ինիեստան էր:

Անցած մրցաշրջանը շատ հաջող էր 30-ամյա Ռիբերիի համար: «Բավարիայի» կազմում նա դարձավ Գերմանիայի չեմպիոն ու գավաթակիր, նվաճեց չեմպիոնների գավաթը:

# «Բարսելոնն» Իսպանիայի սուպերգավաթակիր

«Բարսելոնը» նոր մրցաշրջանում իր առաջին տիտղոսը նվաճեց` դառնալով Իսպանիայի սուպերգավաթակիր: Սեփական հարկի տակ Մադրիդի «Ատլետիկոյի» հետ կայացած խաղում գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: Քանի որ Մադրիդում գրանցվել էր 2-2 հաշիվ, ուստի ի հաշիվ մրցակցի դաշտում խփած գոլերի «Բարսելոնը» նվաճեց Սուպերգավաթը: Պատասխան խաղում «Բարսելոնին» կարող էր հաղթանակ պարգեւել Լիոնել Մեսին, սակայն խաղավարտից 2 րոպե առաջ 11 մ նշակետից նրա հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի հորիզոնական ձողին:

# Բլեյքն ավարտեց կարիերան

Ամերիկացի թենիսիստ Ջեյմս Բլեյքն ԱՄՆ-ի բաց առաջնության մեկնարկից առաջ հայտարարել էր, որ այդ մրցաշարը վերջինն է լինելու մարզական իր կարիերայում: Բլեյքը մրցաշարում ընդամենը մեկ հանդիպում անցկացրեց` զիջելով խորվաթ Իվո Կառլովիչին (7-6, 6-3, 4-6, 6-7, 6-7): Դա պրոֆեսիոնալ թենիսիստի կարիերայում Բլեյքի վերջին մրցախաղն էր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# ՄԱԿ-ի տեսուչները Սիրիայից կհեռանան շաբաթ օրը

*1-ին էջից*

Սիրիայի իշխանությունները պատրաստ են մահապարտ օդաչուների օգտագործել ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների հնարավոր հարձակումը կասեցնելու համար: Դամասկոսի մոտ գտնվող հակաօդային պաշտպանության ռազմակայանի սպաներից մեկը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին ասել է, որ արդեն ստեղծված է 13 օդաչուներից կազմված «մահապարտների խումբ»:

«Եթե չկարողանանք դիմակայել թշնամու օդուժին, մեզ կօգնեն օդաչուները, որոնք պատրաստ են խոյահարելու հակառակորդի օդանավերը», ընդգծել է սպան:

Նա պնդում է, թե սիրիական բանակում կան ավելի քան 8 հազար մահապարտներ, որոնք «պատրաստ են ամեն պահի նահատակվելու, որպեսզի կանգնեցնեն նախահարձակներին»:

Սիրիայի կառավարությունը սկսել է տարհանել մարդկանց կառավարական շենքերից եւ ռազմավարական կետերից, որոնք կարող են հարձակման թիրախներ դառնալ: Սիրիական բանակի հրամանատարությունը Դամասկոսի ռազմակայաններից տարհանում է զինծառայողներին: Սիրիայի ընդդիմադիրները տեղեկացնում են մայրաքաղաքի միջազգային օդանավակայանում նկատվող աշխուժության մասին. մոտակայքում բանակի երեք ռազմակայան կա:

«Ալ Արաբիա» հեռուստաալիքը հաղորդում է Դամասկոսից հեռացող զրահատեխնիկայի եւ բեռնատարների մասին: Մայրաքաղաքում օգոստոսի 29-ին սովորականից ավելի լուռ էր. մարդկանցից շատերը չէին գնացել աշխատանքի:

Իրանի հեռուստատեսությունը հաղորդում է, որ երկրի գերագույն հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին կարգադրել է Սիրիայից հետ կանչել իրանցի զինծառայողներին:



Ընդհանուր առմամբ կհեռանա 12 հազար զինծառայող: Պատճառն այն երկյուղներն են, որ հակասիրիական ռազմական գործողությունը կհանգեցնի Սիրիայի օդանավակայանների փակմանը:

Ինչ վերաբերում է այս ամբողջ իրարանցման մեղավոր Արեւմուտքի գլխավոր երկիր ԱՄՆ-ին, նախագահ Բարաք Օբաման ամերիկյան հեռուստաալիքներից մեկին տված հարցազրույցում ասել է. «Ես դեռ որոշում չեմ ընդունել: Մենք հուսով ենք, որ Սիրիայում վերջին հաշվով կիրականացվի քաղաքական անցում նոր իշխանության: Պատրաստ ենք ամենքի՝ Ռուսաստանի եւ մյուս երկրների հետ աշխատել, որպեսզի կողմերին համոզենք նստելու բանակցությունների սեղանի շուրջը: Սակայն Ասադի վարչակարգը պետք է հասկանա, որ սեփական ժողովրդի դեմ քիմիական զենքի օգտագործումը դիպչում է նաեւ ԱՄՆ-ի ազգային շահերին»:

Այսինքն, ՄԱԿ-ի տեսուչները դեռ հաշվետվություն չեն հրապարակել, բայց Օբաման վստահ է, որ քիմիական զենք օգտագործել են Սիրիայի կառավարական ուժերը: Այս կապակցությամբ բավական չարագույժ է հնչում Սիրիայի ԱԳՆ հայտարարությունը, որ իրականում քիմիական զենք օգտագործել են գրոհայինները եւ շուտով իբր նորից կօգտագործեն, այս անգամ՝ եվրոպացիների դեմ:

Պ. Ք.

# Իլհամ Ալիեւը՝ հակասիրիական կոալիցիայում

*1-ին էջից*

«**Ազգ**»-ի նախորդ համարում մենք գրել էինք Ռուստամ Իբրահիմբեկովի եւ Դաղստանի ղեկավար Աբդուլատիպովի միջեւ «Մախաչկալայում գաղտնի բանակցությունների» մասին ադրբեջանական մամուլի հրապարակումներից եւ ենթադրել, որ «հնարավոր է, դա մոգոնել են հատուկ ծառայությունները»:

Երեկ այդ թեման նոր դրսեւորումներ է ունեցել: Այս անգամ haqqin.az-ի «լավատեղյակ աղբյուրները» հայտնել են, որ Ռուսաստանում գործող «Թալիշական սփյուռք» կազմակերպությունը մտադիր է «գումարներ հանգանակել եւ տրամադրել նախագահի ընդդիմադիր թեկնածու Ջամիլ Հասանլիի նախընտրական քարոզչությանը»: Լրատվամիջոցը նպատակահարմար է գտել այդ «ստույգ տեղեկությունն» ուղեկցել խմբագրական մեկնաբանությամբ, ըստ որի՝ «Ռուսաստանում գրանցում ստացած «Թալիշական սփյուռք» կազմակերպությունը հայտնի է անջատողական ձգտումներով»:

Ակնարկը շատ թափանցիկ է: Իշխանահաճ լրատվամիջոցը փաստորեն ռուսաստանյան կողմին մեղադրում է Ադրբեջանի դեմ «անջատողական ձգտումներ ունեցող» կազմակերպությանը պետական գրանցում տալու եւ Իլհամ Ալիեւի մրցակից թեկնածուի օգտին քարոզչություն ծավալելու հնարավորություն ընձեռելու մեջ: Այս կարգի հրապարակումները եւ քաղաքագիտական վերլուծություններում ակնարկները վերջին օրերին ավելի հետեւողական եւ, ըստ ամենայնի, իշխանություններից ուղղորդված բնույթ են ստացել:

Դա կարող է լինել քարոզչական նախապատրաստություն՝ Ռուսաստանի հետ հետագա հարաբերությունները «վերանայելու անհրաժեշտության» համար: Արդեն կարելի է մեծ վստահությամբ խոսել Ադրբեջանի միանշանակ արեւմտամետ կողմնորոշման մասին: Իլհամ Ալիեւն այդ մասին թերեւս կխոսի նախագահական ընտրություններից հետո կամ նույնիսկ քարոզարշավի ինչ-որ փուլում, եթե Սիրիայի դեմ ձեւավորվի ռազմական կոալիցիա, եւ Բաշար Ասադը տապալվի: Ամեն ինչ տանում է դրան:

Արժե թերեւս նաեւ նկատել տալ, որ Ադրբեջանում որոշակի «նախապատրաստություններ են տեսնում» նաեւ հարավային՝ Իրանի ուղղությամբ: Վերջերս Լենքորանում ֆուտբոլային խաղի ժամանակ տեղի ունեցած անկարգությունները կարծես գնահատվում են որպես «իրանական հատուկ ծառայությունների ձեռքի գործ»: Ադրբեջանի հարավային շրջաններում այդ միջադեպից հետո փաստացի արտակարգ դրություն է հայտարարված, ինչը, չի բացառված, տվյալ տեղաշրջան «պատահական մարդկանց» մուտքն արգելելու նպատակ է հետապնդում: Որոշ տեղեկություններով՝ Լենքորանում եւ Իրանի հետ սահմանակից այլ շրջաններում «ձեռնարկվում են անվտանգության աննախադեպ միջոցառումներ»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

# Հայաստանի զբոսաշրջային պաստառը՝ Եվրոպայի տարածաշրջանի հաղթող

**Օգոստոսի 24-29-ը Զիմբաբվեի Վիկտորիա-Ֆոլլս եւ Զամբիայի Լիվինգստոն քաղաքներում կայացած ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) գլխավոր ասամբլեայի 20-րդ նստաշրջանի շրջանակներում տեղի է ունեցել 2013թ. Vettor Giusti զբոսաշրջային պաստառների առցանց քվեարկությամբ ցուցահանդես-մրցույթը, որին մասնակցել են ՄԱԿ ԶՀԿ 156 լիիրավ անդամ պետություններ եւ շուրջ 400 աֆիլացված անդամներ:**



**Մրցույթում Հայաստանը ներկայացնող «Քարերի սիմֆոնիա» պաստառը ճանաչվել է Եվրոպայի տարածաշրջանի հաղթող: Մրցանակը հանձնվել է Հայաստանի պատվիրակության ղեկավար, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանին:**

**Հայաստանի զբոսաշրջային պաստառը մինչեւ հաջորդ նստաշրջանը՝ 2 տարի շարունակ, տեղադրված կլինի ՄԱԿ ԶՀԿ պաշտոնական կայքի գլխավոր էջում, ինչպես նաեւ Մադրիդում ՄԱԿ ԶՀԿ գրասենյակի նախասրահում, ինչը կարող է էապես նպաստել Հայաստանի զբոսաշրջության գրավչության բարձրացմանը միջազգային շուկայում:**

**Հիշեցնենք, որ 2011 թվականին Կորեայի Կյոնջու քաղաքում կայացած ՄԱԿ ԶՀԿ գլխավոր ասամբլեայի 19-րդ նստաշրջանի շրջանակներում կայացած զբոսաշրջային պաստառների Vettor Giusti ցուցահանդեսմրցույթում Հայաստանը ներկայացնող պաստառը հաղթող էր ճանաչվել ժողովրդի ընտրություն (People´s Choice Award) անվանակարգում:**

ՀՀ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Զարգացման Հայկական Բանկ ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Բնակարան, ընդ. մակերեսն է՝ 83.9 ք.մ.: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր վարչական շրջան, Մամիկոնյանց փողոց, 23 շենք, բնակարան 21: Լոտի մեկնարկային գինը՝ 51000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին (ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 16.09.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 17.09.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գնի իջեցումով, բայց ոչ պակաս սահմանված հատման գնից: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

**Վաճառվում է**

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 29.8.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: